

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԾՆԵԼ ԱԶԳԸ

1870 թվականին սկսված ֆրանկո-պրուսական պատերազմը ավարտվեց Ֆրանսիայի խայտառակ պարտությամբ:

Մեծամտացած ֆրանսիացիները կարծում էին, թե Փարիզում նստած ու կայսեր տիտղոսը կրող հանրահայտ կորսիկացու զարմիկը պատվով կպահի իր հորեղբոր հիշատակն ու լլտիացած պրուսացիներին կհիշեցնի Իենայի ու Աուերշտադտի, Նապոլեոնյան դարաշրջանում իրենց կրած խայտառակ պարտությունների մասին:

Բայց տեղի ունեցավ անսպասելին. ֆրանսիական բանակը չկարողացավ ո՛չ միայն լուրջ դիմադրություն ցույց տալ հակառակորդին, այլ ընդհակառակը, փախչում էր թշնամու առջևից ու իրար հետևից նրան էր հանձնում տարածքներ, բերդեր, ունեցվածք ու պահեստներ, գեներ ու զինավթեր:

Եվ վերջում էլ, Նապոլեոն Երրորդ կոչեցյալ կայսրը, իր հարյուր հազարանոց բանակով հանձնվեց թշնամուն, իր սուրը հանդիսավոր կերպով ուղարկելով պրուսական թագավորին, ով արդեն լրիվ հասունացել էր նոր, միացյալ Գերմանիայի կայսր դառնալու համար:

Հայտնի կորսիկացու անճարակ զարմիկը երեք տարի անց իր վերջը գտնելու է անգլիական բժշկի դանակի տակ, երբ վերջինս փորձում էր բուժել նրա միզապարկը, անգլիական ոճով: Իսկ նրա որդին, դառնալով անգլիական գաղութային բանակի սպա, հոր նման անփառունակ վերջ է ունենալու. նրա կյանքի թելը կտրելու են աֆրիկացիների (գուլուսներ) մի քանի տասնյակ նիզակները, որոնք առանց դիմադրության պիտի մխրձվեն են նրա մարմինը: Սա ի միջ այլոց:

Ստացվեց, որ մինչ ֆրանսիացիները հպարտանում էին ու մեծարում իրենց փառավոր անցյալը, փառաբանում էին Առաջին Նապոլեոնին ու զբաղվում ինքնախաբեությամբ, մինչ զբաղված էին բանասարկություններով ու բանակը անտարբերության մատնելով (ես մեղմ արտահայտություն են օգտագործում), պրուսացիները քայլ առ քայլ, գերմանական ճշտապահությամբ ու համառությամբ ստեղծում էին նոր բանակ, նոր գաղափարախոսություն (կայսերական, նոր միացյալ Գերմանիայի), նոր արդյունաբերություն, նոր հրետանի, մի խոսքով, զբաղված էին ռեալ գործով: Արդյունքը երկար սպասել չսվեց: Ֆրանսիան կորցրեց տարածքներ (Էլզաս ու Լոթարինգիա), կորցրեց Մեծ ՏերՆիթեմ ՂԵՄԵԸ, պարտավորվեց վճարել հինգ միլիարդ ռազմատուգանք ու ստիպված եղավ կրելու ազգային խայտառակության սև պսակը:

Ձեզ ոչ մի բան չի՞ հիշեցնում ֆրանսիացիների պատմության այս խայտառակ էջը, հարգելի ընթերցող: Հիշեցնում է: Մոտավորապես այդպիսի վիճակում է գտնվում այսօրվա մեր հայրենիք Հայաստանը, որը միայն իր մասշտաբներով է տարբերվում ֆրանսիայից:

Այդ ծանր օրերին Ֆրանսիայում մի պատանի էր ապրում, 16-ամյա մի պատանի: Նա գերմանացիների կողմից օկուպացված տարածքի բնակիչ էր ու մեծ ցավով էր ապրում իր հայրենիքի կորուստներն ու պարտությունը: Ու որպես իր սրտի ճիչ, նա իր լիցեյում ներկայացրեց մի թեզ, որը վերնագրված էր. ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԾՆԵԼ ԱԶԳԸ: Այդ պատանին ֆրանսիայի ապագա փառքն ու պսակը կազմող Անրի Պուանկարեն էր: Այո՛, սիրելի ընթերցող, այն նույն Պուանկարեն, որի հիպոթեզը հարյուր տարի անց պիտի հաստատեր մեկ ուրիշ հանճար՝ Գրիգորի Պերեյմանը, բայց այդ մասին մեկ ուրիշ անգամ:

Եվ այդ պատանին բակլավրի իր թեզում մասնավորապես գրում է.

«Ապագա ազգային վերածնունդը պետք է անցնի նյութական ու հոգևոր կյանքի բոլոր բնագավառներում ունեցած հաջողությունների ճանապարհով. արդյունաբերության ու գյուղատնտեսության առաջադիմությամբ, գիտության ու տեխնիկայի նվաճումներով: Միայն անընդհատ առաջադիմությամբ պետական ու հասարակական բոլոր ոլորտներում կարելի է Հայրենիքը դարձնել հարուստ, ուժեղ ու անկախ»:

Միևնույն ժամանակ մեկ ուրիշ մեծ ֆրանսիացի, արդեն կայացած, Վիկտոր Հյուգոն, Ազգային ժողովի ամբիոնից ասում էր. «Վաղվանից ֆրանսիան ապրելու է միայն մեկ մտքով. վերականգնել երկիրը, հավաքել ուժերը, սնել սրբազան ցասումն ու դժգոհությունը, դաստիարակել նոր սերունդ, ձևավորել բանակ ամբողջ ժողովրդից, աշխատել անխոնջ ու առանց կանգառի, ուսումնասիրել մեր թշնամիների գիտությունն ու տեխնիկան,

նորից դառնալ Մեծ Ֆրանսիա, 1792 թվականի Ֆրանսիա, գաղափարի Ֆրանսիա, զինված ՄՐՈՎ»:

Հայ պատանիների մեջ այսօր դեռ չի երևում Պուանկարենի քաջային կարգում գտնվող մեկը, ազգային կարևոր հարցերը նույնիսկ ձևակերպելու համար, էլ չեն ասում, որ Վ. Հյուգոյի Էկվիվալենտի մասին ընդհանրապես խոսելն ավելորդ է: Ուստի ես, հայ ժողովրդի նվաստ որդիս, նայելով մեր իրականությանը, ասում եմ հետևյալը.

Բախտի բերմամբ թե պատահմամբ ստանալով դարերով փայլալայծ անկախությունը, հայ ժողովուրդը ի դեմս իր ղեկավարների ու մտավորականության, չկարողացավ ստեղծել մի կենսունակ պետություն:

Այն, ինչ ունենք, մի ողորմելի քաղաքական կազմավորում է, առատորեն համեմված քրեական բարքերով: Երկրում չկա ամենակարևորը, անվտանգության երաշխիքը: Չկա տնտեսական հիմքը, որի վրա պիտի կառուցվի պետությունը: Բացակայում է արդյունաբերությունը, չկա գյուղատնտեսություն, չկա գիտություն, չկա ազգին միավորող գաղափար, չկա հասկանալի ու շուշափելի ազգային նպատակ: Չկան կամք ու գիտելիքներ՝ որևէ խոշոր ծրագիր իրականացնելու համար: Պետական ապարատի ՕԳԳ-ն մտո է գրոյին, մարդակերային չափերի է հասել պետական պարտքն ու հայտնի չէ, թե ինչպես և որտեղից է նա վճարվելու:

Այսօրվա ազգային աղետի պայմաններում մեր միակ ու իրական դաշնակիցը մեր բանակն է:

Ռուսական հայտնի «Ի՛նչ անել ու ով է մեղավորը» հարցերը դարձել են այսօրվա մեր օրակարգի հարցեր ու դրանք պատասխանողը չկա:

Մեր կոկորդից բռնել է լինել-չլինելու խնդիրը ու մեզ առջևում սպասվում է կամ նոր Սարդարաբադ, կամ նոր Ավարայր:

Լինել, թե չլինել, ա՛յս է խնդիրը, ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ. տանել գոռ բախտի պարսաքարերը և սլաքներ՞ը, թե՞ գեներ վերցնել ցավ ու վշտերի մի ծովին ընդդեմ, ու դիմադրելով, ՎԵՐԱ ՏԱԼ ԲՈՒՆՈՒՆ:

Յուրաքանչյուր ազգ, ով ուզում է բարգավաճել, պետք է իր կյանքը կառուցի ելնելով իր սեփական պատմական փորձից, վերլուծելով իր բոլոր հաջողություններն ու անհաջողությունները, հարևանների պատմությունն ու աշխարհի անցուդարձը: Արվում է արդյոք այս ամենը մեր ժողովրդի առօրյա կյանքը կառավարողների կողմից: Վերջին երեսուն տարին ցույց է տալիս, որ ո՛չ: Ավելին, փոցխի վրա ոտ դնելը մենք դարձրել ենք ազգային սպորտաձև: Ավելին. մենք համարձակություն չունենք պետական մակարդակով ճանաչել իրողությունը, չունենք իրեն իրենց անուններով կոչելու քաջություն, սեփական սխալները ճանաչելու ու ուղղելու համարձակություն: Ունենք կաթվածահար եղած պետական ապարատ, որտեղ կառավարման պրոցեսում տարերայնության էլեմենտը կազմում է համարյա հարյուր տոկոս:

Ուստի մեզ անհրաժեշտ է արմատապես փոխել պետական կառավարման ռեժիմը, երկիրը պատրաստել պատերազմի, հայտարարել պատերազմական իրավիճակ ու ապահովել հայրենասիրական ա՛յն ռեժիմը, որը մենք ունենինք 1941 թվականի նոյեմբերի 7-ին, 1945 թվականի մայիսի 9-ին, 1918 ու 1992 թվականների մայիսներին, քանզի մեր հարևանի ու նրա հովանավորի վարքը, տարածաշրջանի քաղաքական իրավիճակը ոչ մի լավ բան չեն խոստանում:

Ու եթե Հայրենիքը վտանգի մեջ է, ապա պետք է ապրենք համապատասխան ռեժիմով՝ արտակարգ դրության, պատերազմական ժամանակվա օրենքներով:

Հայաստան երկրում, ինչպես համարյա ՍՄԿՄ-ի ողջ տարածքում, 1991 թվականին տեղի ունեցավ քրեական-հակաժողովրդական հեղաշրջում, որի հետևանքով հայ ժողովրդի երեք սերունդների արյուն-արտասուքով ու դառը քրտինքով ստեղծված տնտեսական ողջ հզորությունները հայտնվեցին մի քանի տասնյակ կուսակցական պարագլուխների, ճեղքից ելած ամեն տեսակի միջանցքային բանասարկուների ու քրեական տարրերի ձեռքին:

Ակամա հիշում ես Տալեյրանի հայտնի խոսքը. «Բազմաթիվ ժողովուրդներ մեծ սարսափ էին ապրելու, եթե իմանային, թե ինչպիսի ոչնչություններ են իրենց կառավարում»:

Այս օրհասական պահին մենք ունենք մեկ ճանապարհ, որը մեզ պետք է տանի դեպի.

30

1. Իշխանության գերկենտրոնացում մեկ կազմակերպության, մեկ առաջնորդի ձեռքում,
 2. 1991 թվականից պետությունից օտարված բոլոր ձեռնարկությունների ազգայնացում,
 3. Սովետական շրջանի Պետական պլանային կոմիտեի վերականգնում, հաշվի առնելով այսօրվա՝ ինֆորմացիայի դարի առանձնահատկություններն ու արագությունները,
 4. Ձեռնարկությունների վերապրոֆիլացում, երկակի նշանակության ապրանքներ արտադրելու համար, առաջին հերթին՝ ռազմական արտադրանքի համար,
 5. Ձեռնարկությունների աշխատանքի ապահովում երկու հերթափոխով, իսկ հատուկ ձեռնարկությունները երեք, այսինքն, ակնընդհատ արտադրությամբ,
 6. Աշխատավոր ժողովրդին սոցիալական երաշխիքների ապահովում, որը կբացառի սննդի, հագուստի ու բնակարանի պակասությունը,
 7. Սովետական կրթական համակարգի վերականգնում, հաշվի առնելով այսօրվա իրողությունները, անվճար կրթության հաստատում,
 8. Մահապատժի վերականգնում Զրեական օրենսգրքում ու ռազմա-դաշտային դատարանների ստեղծում, ունեցվածքի բռնագրավման հողվածների վերականգնում,
 9. Զաղաքական բոլոր կուսակցությունների գործունեության դադարեցում կամ լիկվիդացում, արտասահմանյան երկրներից սնվող բոլոր հասարակական կազմակերպությունների լուծարում կամ վտարում երկրից, նրանց տնտեսական բոլոր ակտիվների բռնագրավում,
 10. Կրոնական կամ կեղծ կրոնական, աղանդավորական բոլոր կազմակերպությունների լիկվիդացում կամ վտարում երկրից, նրանց ունեցվածքի բռնագրավում,
 11. Երկրում հայկական կրոնական հաստատություններից պիտի գործեն միայն Հայ Առաքելական եկեղեցին ու Հայ Կաթոլիկ եկեղեցին իր Սուրբ Ղազար կղզու միաբանությամբ հանդերձ, հատուկ առաքելություններով,
 12. Ուրիշ եկեղեցական հիմնարկներից գործելու իրավունք պետք է ունենան միայն Ռուս Ուղղափառ եկեղեցու կառույցները, մեր եղբայր եզդիների եկեղեցին ու Իրանի Իսլամական Հանրապետության Կապույտ մզկիթը: Հրեաները, ասորիները ու հույները ցանկության դեպքում կարող են կառուցել իրենց կրոնական հիմնարկները ՀՀ կառավարության բարյացակամ հովանավորությամբ,
 13. Նոր հիմնի ու նոր Սահմանադրության ստեղծում,
 14. Հրաժարվել եվրոպական քաղաքական պրակտիկայի նմանակումից ու ապահովել օրենսդիր, գործադիր ու դատական իշխանական կառույցների արմատական վերաստեղծում, ունաց լուծարում, նրանց փոխարինելով ուրիշ, փոքրաթիվ, բայց բարձր ՕԳԳ ունեցող, ճկուն ու դինամիզմով օժտված կառույցով: Այս աշխատանքը են վերցնում են ինձ վրա,
 15. Երկրի վերածում ռազմական ճամբարի,
 16. Հեռուստատեսության ու ռադիոյի կենտրոնացում միայն պետության ձեռքում, մասնավոր թերթերի ու ամսագրերի համատարած հսկողություն ու ցնեզուրա:
- Ու այս ամենի մեջ իր ակտիվ մասնակցությունը պետք է ունենա Սփյուռքը: Մենք պետք է մշակենք մեխանիզմներ, որպեսզի Սփյուռքի ողջ հայրենասիրական ձիրքերը իրագործվեն Հայաստանում: Սփյուռքը Հայաստանի իշխանական բոլոր օղակները պետք է հարստացնի իր տաղանդավոր ու հայրենասեր, ՀԱՅԱՍՏԱՆ, քաղաքացիական ու ռազմական կադրերով, ովքեր Հայաստանի տնտեսությանը բերելու են աշխարհի ամենաառաջավոր տեխնոլոգիական նվաճումները: Ավելորդ է ասել, որ Սփյուռքի հնարավորություններն այս գործում անսպառ են:
- Մենք չպետք է նայենք, թե ինչպես են արձագանքելու այս ամենին այսպես կոչված, քաղաքակիրթ երկրները, նրանց էմիսարներն ու գործակալները: Թե ինչ են ասելու որոշ միջազգային կազմակերպություններ, ովքեր «ավանդաբար» որոշում են այս կամ այն երկրում դեմոկրատիայի տոկոսի չափի մասին: Ի դեպ, ԱՄՆ-ի կառավարությանը պետք է ասել, որպեսզի Հայաստանից հեռացնի դեսպանության դրոշի տակ գործող 2600 հոգանոց ռազմական բազան, օրենք է պետք ընդունել, որ ուրիշ երկրների դեսպանատների աշխատակիցների քանակը չպետք է գերազանցի հարյուրը:
- Ֆրանսիան, անցնելով պատմության քառուղիներով, դարձավ

**– Ասա՛ դու ինձ, մա՛րդ արարած,
Ո՛րն է հրաշք այն բանալին,
Որ բաղձալի իշխանության դուռն է բացում:
– Ոսկին է դա, – մեկն ինձ ասաց,
Ամենագոր դեղին ոսկին,
Որի առջև խոնարհվում են թե՛ այր, թե՛ կին,
Թե՛ թագավոր, թե՛ մուրացկան,
Թե՛ բացական ու թե՛ ներկան:
Նրանո՛վ է, որ կամքը չար
Ստին դարձնում է ճշմարիտ,
Գունատ քարին՝ լույս – մարգարիտ,
Նրանո՛վ են մեր հայրենի անդամատանում
Սուտ սերմերը ծլում, ծաղկում ու զորանում:
Նրանո՛վ է դավաճանը մարտիրոսի պատիվն առել,
Նրանո՛վ են պոռնիկները պատվախնդիր կանայք դառել,
Նրանո՛վ է ազնիվ մարդը աղբանոցի բաժին դառել,
Նրանո՛վ է ստահակը իմաստունի գահին թառել,
Ու դժվար է այս ամենին հակաճառել...**

**Անհուն կարոտ, անքուն գիշեր,
Հայացք՝ խաչված լուսնի շողին,
Հոգին մաշող քաղցր հուշեր,
Ուշացած ժամ, սառն անկողին:**

**Մենակություն, դառն հեկեկանք,
Փլված հույսի ավերակներ,
Ինքնախաբեության պատրանք,
Անդարձ կորած ժամանակներ:**

**Ո՛ւր ես, սե՛ր իմ, մոլորվե՛լ ես
Կյանքի վարար հորձանուտում,
Թե՛ միամիտիս լքել ես
Ուրիշին՝ ես սիրահետում...**

Սամվել ԱՎԴԱԼՅԱՆ

աշխարհի առաջավոր երկրներից մեկը: Պատանի Անրի Պուանկարեն իր ՄԵԾ լուծման ունի իր հայրենիքի վերածնունդի գործում: Նա Լեոնարդո Էյլերից հետո երկրորդ ունիվերսալ գիտնականն էր, ով մեծագույն նվաճումներ ունեցավ իր ժամանակվա մաթեմատիկայի, ֆիզիկայի, մեխանիկայի, մարդկային գործունեության բոլոր բնագավառներում: Նրա նվաճումները այլքան մեծ են ու զգալի, որ Ֆրանսիայի վերածնունդը գիտությունների ու տեխնիկայի ասպարեզում կարելի է բնորոշել, արտասանելով միայն Պուանկարե անունը: Փակագծում կշեմ, որ Հարաբերականության տեսության իսկական հեղինակը հենց Պուանկարեն է, այլ ոչ թե Ալբերտ Էյնշտեյնը: Ես կոչ եմ անում հայ երիտասարդությանը սովորել, սովորել ու նորից սովորել, ինչպես ասում էր Լենինը, քանզի անգրագետին խաբելն ու ստրկացնելը, նրա ունեցվածքը խլելը շատ ավելի հեշտ է, մեր՝ գայլային օրենքներով ապրող մոլորակի վրա:

Կարո՞ղ ենք այսօր մենք, հայերս, դուրս գալ այսօրվա ազգային աղետի ճիրաններից:
Ես համոզված եմ, որ կարող ենք:
Մենք պետք է ստեղծենք նոր ազգային գաղափար, ձևակերպենք պարզ ու որոշակի ազգային նպատակ ու լծվենք նրա իրագործման գործին:
Ու ինչպես ասում էր մյուս մեծ ֆրանսիացին, մենք պետք է լինենք գաղափարի ազգ, զինված ՄՐՈՎ:
Միայն այն ժամանակ մեզ հետ հաշվի կկատեն թե՛ դաշնակիցները, թե՛ թշնամիները:
9 նոյեմբերի, 2020 թ.

Սամվել ԱՎԴԱԼՅԱՆ

**Օտարության մեջ ազատ լինելը այլ
գերություն է, իսկ տան մեջ նույնիսկ գերի
լինելը՝ այլ ազատություն:**

Պարույր ՍԵՎԱԿ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱԲԳԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ

Աբգար Կարապետի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ – դուկտոր, պրոֆեսոր, Գիտության և մշակույթի ակադեմիկոսների ասոցիացիայի նախագահ: Ծնվել է Սիսիանի շրջանի Ուզ գյուղում, ավարտել է Ջերմուկի միջնակարգ դպրոցը: 1972 թվականից ապրում է Մոսկվայում:

– *Պարոն Հայրապետյան «ԳործԱրար» ամսագրի հարցազրույցը ձեզ հետ կունենա երկու ուղղություն:*

Առաջինն ուզում եմ, որ մենք խոսենք ձեր աշխատությունների մասին: Հայտնի է, որ ձեր մասնագիտական գրքերն արդեն դուրս են եկել նեղ շրջանակներից: Նրանք համբավ են ստացել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Իսկ ձեր վերջին գրքերը Հայաստանի և հայ ժողովրդի մասին ձեռքից ձեռք են անցնում:

Ինչո՞ւ դուք չեք խոսում ձեր գրքերի մասին: Ինչո՞ւ չեք անցկացնում ձեր գրքերի շնորհանդեսը:

Երկրորդ՝ ես ուզում եմ որ դուք պատմեք Արցախից բռնի տեղահանված մարդկանց մասին: Գիտեմ, որ այն դժվարին օրերին դուք գտնվել եք Գորիսում:

Այսպիսով, ԱՆՑՆԵՆԸ ՀԱՐՑԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿՍԲԻՆ:

– *Ձեր գրքերը բազմառարկայական են: Նրանք ունեն տարբեր ուղղություններ: Ի՞նչ կարող եք ասել այդ մասին: Ինչո՞ւ չեք ներկայացնում ձեր գրքերը, օրինակ ինչո՞ւ չեք անցկացնում նրանց շնորհանդեսը:*

– Այո, դուք իրավացի եք: 40 տարվա ընթացքում ես գրել եմ ավելի քան 20 գիրք՝ 9000-10000 էջ ընդհանուր ծավալով: Գրքերն ունեն տարբեր ծավալներ, տևողություններ, տևողություններ, հոգեբանական, պատմական: Ես երբեք չեմ կազմակերպել իմ գրքերի շնորհանդեսը:

Շատերը գարնանում են, թե իմ գրքերը ինչու են բազմառարկայական: Դուք էլ եք հավանաբար գարնացած: Իսկ պատասխանը պարզ է:

Հիմա պատմեմ թե ինչու է այդպես ստացվել:

1988-ին Հայաստանում տեղի ունեցավ աղետալի երկրաշարժ:

Հետո սկսվեց պատերազմը Արցախի և Ադրբեջանի միջև, այնուհետև տեղի ունեցան վրաց-աբխազական և վրաց-օսեթական իրադարձությունները: Մոսկվան լցվել էր հայ փախստականներով: Այդ ժամանակ յուրաքանչյուր հայ ցանկություն ուներ օգնելու Հայաստանին ու հայերին:

Այդ տարիներին ակադեմիկոս Ս. Ս. Գրիգորյանը ակտիվ հասարակական գործիչ էր: Նա Մոսկվայի հայ համայնքի նախագահն էր, Մոսկվայի տարածաշրջանային ազգային-մշակութային ինքնավարության նախագահը և այլն:

Նրա գլխավորությամբ ստեղծեցինք խըմբեր և սկսեցինք գումար հավաքել Հայաստանից, Ադրբեջանից, Աբխազիայից, Վրաստանից փախստականներին օգնելու համար:

Այս աշխատանքի հենց առաջին օրը տեղի ունեցավ մի իրադարձություն, որից հետո ես որոշեցի այլևս չբաղվել այդ գործով:

Երբ մի ձեռնարկությունում սկսեցինք գումար հավաքել, շատ վատ հազված

մի կին հանեց ականջօղորդ, դրեց տուփի մեջ և ասաց. «Ես փող չունեմ, վերցրե՛ք՝ սա իմ միակ հարստությունն է»: Հետո իմացանք, որ նա աշխատել է Երևանի մաթեմատիկական մեթոդների գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես հավաքարար:

Այս դեպքն ինձ և շատերին ցնցեց: Պարզ դարձավ, որ ես չեմ կարող զբաղվել այդ գործով:

Մի քանի օր մտածում էի ինչ կարելի է անել փախստականներին օգնելու համար: Ի՞նչ անել: Որոշեցի զբաղվել նրանց աշխատանքի տեղավորելու հարցով:

Բացեցի Կադրերի գործակալություն ԻՆՖՕՐՄՈՒՄ (ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾՈՒՈՒՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ): Ոչինչ չստացվեց:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առանց նախնական պատրաստության հեշտ չէ Մոսկվայում փախստականների համար համապատասխան աշխատանք գտնելը: Ուրեմն պետք էր նրանց տալ որևէ մասնագիտություն, հետո գործի ընդունել:

Որոշեցի բացել ինստիտուտ, նրան կից կուրսեր և կադրեր տեղավորելու բաժին, որպեսզի հնարավոր լինի մեր կուրսերն ավարտած մասնագետներին տեղավորել աշխատանքի:

Բացեցի ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ինստիտուտում սկսեցին գործել բազմամասնագիտական կուրսեր (2 ամսից մինչև 1 տարի տևողությամբ)՝ հաշվապահություն, դիզայն, մեկնեմենթ և այլն, ընդհանուր 46 ուղղություններ:

Մի քանի տարի աշխատեցինք: Անդրկովկասի հանրապետություններից մեր կուրսերն ավարտեցին ավելի քան 3000 մարդ: Նրանցից ավելի քան 80%-ին տեղավորվել էինք աշխատանքի: Մեզ թվում էր, թե ամեն ինչ գերազանց է:

Ունեինք աշխատանքային պլաններ և ծրագրեր, անց էին կացվում բարձրագույն մարմինների կողմից ստուգումները: Նրանք մեզ խրախուսում էին: Իհարկե ամեն ինչ լավ էր: Բայց 2005 թվականին մեկ ամսվա ընթացքում տեղի ունեցան մի քանի իրադարձություններ, որոնք ցնցեցին մեր կուրսավորված:

Իրադարձություն 1. Մի կին եկավ մեզ մոտ, ով ուզում էր դասավանդել հոգեբանություն: Հարցազրույցի ժամանակ մեր մասնագետներն սկսեցին խոսել Կարլ Յունգի, Հիգմունդ Ֆրեյդի, Էրիկ Բյորնի, Էրիկ Երիկսոնի մասին: Ուշադիր լսելուց հետո այս կինը հարցրեց. «Կարող եք ասել թե այս արտասահմանցիները քանի՞ տարի են աշխատել ձեզ մոտ»:

Իրադարձություն 2. Մեր մշտական համակարգի ուսուցիչը դուրս եկավ աշխատանքից: Տեղեկանալով այս մասին՝ մեզ մոտ մեկ այլ ինստիտուտից եկավ ինֆորմատիկայի դասախոս: Ուսանողները անմիջապես սկսեցին դժգոհել: Պարզվեց, որ պրոֆեսորը WORD ծրագիրը սկսել է բացատրել ինտեգրալների միջոցով:

Այս իրադարձություններից հետո մենք որոշեցինք, որ ծրագրերը բավարար չեն, անհրաժեշտ է հիմնական առարկաների համար պատրաստել ընդհանուր ուսումնական ձեռնարկներ:

Գիշեր-ցերեկ աշխատելով՝ 3 տարվա

ընթացքում հիմնական առարկաների համար ուսումնական ձեռնարկներ պատրաստեցի:

Մի օր մեզ մոտ եկավ ակադեմիկոս Սամվել Գրիգորյանը: Տեսնելով, որ բոլոր ձեռնարկների վրա գրված է իմ անունը, բոլորի ներկայությամբ ասաց. «Եթե դուք ռեկտոր եք, դա չի նշանակում, որ պետք է ձեր անունը գրեք բոլոր ձեռնարկների վրա»:

Երբ նա իմացավ, որ նրանց հեղինակը ես եմ, ներողություն խնդրեց ու ասաց՝ «Ուրեմն պետք է այս բրոշյուրներից կտրված գրքեր սարքես, թե չէ չարչարանքը կկորչի»:

Այսպիսով, 10 տարվա ընթացքում բոլոր ուսումնական ձեռնարկները վերածվեցին գրքերի:

Մասնագիտական գրքերից թվարկեմ մի քանիսը

- ◆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (2 գիրք),
- ◆ ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԵԼԱՎԱՐԳ (3 գիրք),
- ◆ ԱՆՆԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ (4 գիրք),
- ◆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ (2 գիրք),
- ◆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (2 գիրք),
- ◆ ԱՆՁՆԱԿԱՎԱՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ,
- ◆ ԿԱՐԻԵՐԱ (2 գիրք),
- ◆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՆԻ ԴԻՄԱԿԱՐՆԵՐ (2 գիրք),
- ◆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ (3 գիրք),
- ◆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ:

Հայաստանին վերաբերվող գրքերից թվարկեմ մի քանիսը:

- ◆ ՀԻՇՆՈՂՈՒԹՅՈՒՆ (1988 թ. երկրաշարժի մասին),
- ◆ ԶԱՐԳՈՒՄ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԶՆՅՈՂ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ,
- ◆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ:

Այս գրքի վրա սկսել եմ աշխատել 2004թ. Ավարտել եմ 2014 թ.: Հրատարակվել է 3 անգամ:

◆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ: Սկսել եմ աշխատել 2014 թ., ավարտել եմ 2021 թ.: Հրատարակվել է 3 անգամ:

ԱՆՑՆԵՆԸ ՀԱՐՑԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿՍԲԻՆ:

– *Պարոն Հայրապետյան, դուք ապրում եք Մոսկվայում: Այն դժվար օրերին, երբ Արցախից ամեն օր հազարավոր փախստականներ էին հայտնվում Գորիսում, ինչպե՞ս դուք հայտնվեցիք այնտեղ:*

– Այո, ավելի ճիշտ կլինի ասել, որ ամեն օր ոչ թե հազարավոր, այլ տասնյակ հազարավոր արցախից բռնի տեղափոխված մարդիկ մուտք էին գործում Գորիս: Նրանք բաշտակալվելով դրոներին, հազուստից բացի ուրիշ ոչինչ էին հասցրել վերցրել իրենց հետ:

Հիմա պատասխանեմ ձեր հարցին: Օգոստոսին ես Մոսկվայից մեկնել էի Երևան: Երբ լսեցի, որ Գորիսում պատրաստվում են ընդունել Արցախի փախստականներին, օգոստոսի 23-ին Երևանից մեկնեցի Գորիս:

Ամիջապես ինձ պարզ դարձավ, որ, իրոք, գորիսցիները լցված էին արցախցիների ցավով:

50

Հաջորդ օրը, վաղ առավոտից Արցախից եկող մեքենաների հոսքը չէր դադարում: Գորիսի բոլոր փողոցներում խցանումներ էին, շատ մեքենաներ կանգնում էին փողոցի երկայնքով: Դեռևս սեպտեմբերի 23-ի առավոտյան Ստեփանակերտից շարժված մեքենաները սեպտեմբերի 25-ի լուսաբացին նոր հասան Կոռնիձոր-Գորիս:

Փախստականները պատմում էին, որ տևից դուրս գալիս բացի փաստաթղթերից ուրիշ ոչինչ էին վերցրել, անգամ հագուստ, որ մեքենաները կանգնում էին հիմնականում խցանումների պատճառով, մարդից խոտերի վրա էին քնում, երեխաները սոված էին, նրանց համար սնունդ գտնելը շատ դժվար է եղել:

Նրանք, ովքեր փախել էին Ասկերանի շրջանի Սարուշեն գյուղից, պատերազմի առաջին գիշերը պատմում էին, որ գյուղը հրետակոծվում էր տարատեսակ զինատեսակներից և ԱՅՄ-ներից և մնալու որևէ հնար չկար: Սարուշեն գյուղի բնակիչ Ռուզանը պատմում էր, որ գյուղի տղամարդիկ մնացին, որ գյուղը պաշտպանեն, իսկ կանայք, երեխաներն ու ծերերը դրուներից պաշտպանվելու համար փախան անտառ:

Արցախից բռնի տեղահանվածների կարծիքով սեպտեմբերի 25-ին Արցախի Ասկերանի շրջանում վառելիքի պահեստում տեղի ունեցած աղետալի պայթյունի զոհերի ու տուժածների մեծ թիվը պայմանավորված է վառելիքի համար ստեղծված հերթերով:

– *Պարոն Հայրապետյան, կարող եք ասել ինչպե՞ս էր կազմակերպված արցախից փախուստականների ընդունումը: Ի՞նչ աշխատանք էր կատարվում այդ օրերին բռնի տեղահանված բնակիչների հետ:*

– Գորիսի դրամատիկական թատրոնում կազմակերպել էին «Արցախից բռնի տեղահանվածների գրանցման կենտրոն»:

Առաջին օրերին փախստականները ժամանակավոր կացարան էին ստանում Գորիս քաղաքի հյուրանոցներում, բիզնես օբյեկտներում, բնակարաններում: Բացի կացարանից՝ ընտանիքներին տրամադրվում էր նաև անվճար սնունդ, հոգեբանի աջակցություն և այլ ծառայություններ:

Նրանք, ովքեր ուզում են մեկնել այլ բնակավայրեր շարունակում են ճանապարհը: Փախստականների հոսքը շատ մեծ էր: Նրանց ընդունում էին նաև վայոց ձորում՝ Վայքի տարանցիկ կետերում:

Իհարկե, պետք է ընդգծել՝ մարզային ու քաղաքային իշխանությունների համակարգված ու միասնական աշխատանքը:

Փախստականներին ընդունելու և տեղավորելու պրոցեսում, ինչպես նաև ժամանակավոր կացարաններում տեղահանվածների հետ աշխատել են նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Կարմիր հաչը կամավորները:

Գորիսի և Վայքի տարանցիկ կետերում նախ գրանցում էին մուտք գործած արցախցիներին: Այնուհետև անձնական տվյալները լրացնելուց հետո նշում էին ընտանիքի անդամների թիվը, հոգեբանական օգնության կարիք ունեցողների թիվը: Նշում էին նաև թե՛ ինչ սննդամթերք և հիգիենայի պարագաներ, հագուստ և կենցաղային այլ ապրանքներ են անհրաժեշտ: Այս ամենից հետո ընտրվում էին արցախցիներին նախընտրելի բնակավայրերը:

Կարմիր հաչը սնունդ էր տրամադրել Գորիսի և Վայքի տարանցիկ կացարաններում գտնվող տեղահանված մարդկանց: Բժիշկները ցուցաբերում էին առաջին բուժօգնություն, օգնում էին քրոնիկ հիվանդություններ ունեցող հիվանդներին, հիգիենայի միջոցներ, տակդիրներ և դեղամիջոցներ տրամադրում:



Ուզում եմ հատուկ նշել կամավորների մասին, հատկապես Գորիսի ուսանողների և դպրոցականների կատարած կամավորական աշխատանքների մասին:

Սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 1-ը Գորիսի և Վայքի տարանցիկ կետերում աշխատող կամավորները օգնում էին փախստականներին տարբեր հարցերում:

– *Պարոն Հայրապետյան, խնդրում եմ ավելի մանրամասն պատմե՞ք կամավորների աշխատանքի մասին:*

– Այդ դժվարին օրերին կամավորները ցուցաբերեցին անզնահատելի սրտացա-

վություն, համախմբվածություն ու ջերմություն: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների աջակցության կամավորական աշխատանքներում ներգրավված ուսանողները շուրջ մեկ շաբաթ բռնի տեղահանված մեր հայրենակիցներին դիմավորում էին, փորձում էին լուծել նրանց ամենահրատապ խնդիրները:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն հայտնելով աշակերտներին, ուսանողներին, ուսուցիչներին և դասախոսներին նշել է, որ նրանց ստեղծած ջերմ մթնոլորտն ու միջավայրը ավելին էին, քան նրանց կատարած կոնկրետ գործողությունները: Ժաննա Անդրեասյանը ընդգծել է նաև, որ Գորիսի ուսանողների և դպրոցականների կատարած կամավորական աշխատանքները օրինակ ծառայեցին մյուս համայնքների և բնակավայրերի համար, որովհետև նրանք իրենց վարքով ցույց տվեցին, թե ինչպես պետք է կազմակերպել այդ տիպի կարևոր աշխատանքը:

Գովասանքի խոսքեր կարելի է ասել ոչ միայն աշակերտների և ուսանողների մասին, այլև Գորիսի բոլոր քաղաքացիների մասին: Գորիսի բոլոր բնակիչներն էլ մեծ աջակցություն էին ցույց տալիս փախստականներին:

Հայաստանի կառավարության տվյալներով Արցախից Հայաստան է մուտք գործել մոտավորապես 101 հազար բռնի տեղահանված մարդ:

«ԳործԱրար» ամսագիր

Արգար ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԲՐՆԻ ՏԵՂԱՅԱՆՎԱԾՆԵՐԸ

ՆԱԽԱԲԱՆ

Երբ լսեցի, որ Գորիսում պատրաստվում են ընդունել Արցախի բռնի տեղահանվածներին, մեկնեցի վախճան: Փողոցները լցված էին տարբեր տեսակի մեքենաներով ու փախստականներով: Մի քանի օր, վաղ առավոտից Արցախից եկող մեքենաների և մարդկանց հոսքերը չէին դադարում: Բոլորն ասում էին, որ պատերազմի հենց առաջին օրից Արցախը հրետակոծվել է տարբեր զենքերից ու ԱՅՄ-ներից:

ԳՆՈՒՄ ԱՆՈՋԻՆ

1

Մի օր եր դաժան՝ մշուշով պատված, Մթության մեջ մեծ ամբոխ էր փռված՝ Մարդկային հոսքեր՝ անթիվ, անհամար, Անհուն թախիծով կծկված, սովահար:

Գորիս քաղաքի թատրոնի բակում՝ Փախստականների գրանցման վայրում, Առատ անձրևի հոսքերից թրջված, Սևաքաճ, վշտի հարվածից ցնցված, Անշուք հագուստով, տխուր, գլխիկոր Կանգնել էին նրանք լու՛ր ու մոլոր:

Եկել էին նրանք տարբեր տեղերից, Հայաթափված Արցախի գյուղերից, Նոր ավաններից ու քաղաքներից: Վշտից քարացած էին էլ շարժվում, ժպիտն ուրիշի նրանց ցավ էր թվում:

Փախած մահացու թշնամու զենքից, Բաժանված իրենց ընտանիքներից, Հարազատներին էին որոնում՝ Իրենց ավիրված տունը վերհիշում:

Մեկը փախել էր վիրավորվելիս՝ Երբ արևն էր իր տունն ավիրել, Մյուսը՝ դաշտում բերք հավաքելիս, Երբ մեքենայի դեկից էր բռնել,

Երրորդն էլ իր փոքրիկին գրկած, Հագիվ էր դաժան թշնամուց պրծել:

Եվ այժմ այդ նրբին հոգիները՝ Արցախում ծնված, ազնիվ ու բարի, – Փառապանծ հողի, բարի, բոստանի, Հայրենի երկրի կուռ մշակները, Ծառաներ դարձան բռնությունների:

Ծանոթ էի ես արդեն շատերին, Հայացքս նրանց էի միշտ ուղղում, Բայց քար էր գցված նրանց բախտերին: Նրանց մասին էի միշտ մըտածում:

Անցկացրի նրանց մոտ ես շատ գիշերներ, Տեսա խոշտանգված, այլալված դեմքեր, Չեմ ուզում նույնիսկ վերքերը բացել՝ Բազմապես տխուր դեպքեր հիշեցնել: Ուզում եմ միայն նշել, որ նրանք Հոգևած, կիսաբուժ, թախծոտ աչքերով, Սրտերում բարի՝ սերմած թշնամանք, Թերահավաճ ու վիատված հույսով Գանգատվում էին լուտանք սփռելով :

2

Մթնում էր. Մռայլված արևը մայր էր մտնում, Նոր շողերը չէին տաքացնում, Նոր խմբերն էլ կշմարտվող հեռվից Մեծ դժվարությամբ էին շարժվում,

60

Առաջ անցնելով տրտևջում բախտից, Տանջված, տառապա՛ծ, նորից գայրանում՝ Պայթում էր նրանց աչքերը վշտից:

Նրանց ամեն ինչ անխիտ էր թվում, Անհուն մրմուռի հառաչը սեղմում, Թաղում էր նրանց մերանը խոճի, Հավատքի վերջին կրակը մարվում, Թախիծն աչքերի փոխվում էր ցավի:

Եվ հենց այդ պահին նրանց սրտերում Չքվել էր իմաստը անձ լինելու, Սուրբ հոգիներում մաղվել էր խիղճը Մտքեր ու գործեր իմաստացնելու:

Նրանց քարացած սրտերի համար հորտակվել էին և ամպագոռոռ, Պետություններն իրենց լուռությամբ, Վերացել էր և իմաստն Աստծու հր քարշունչ դարձած անտարբերությամբ:

Կծկված սրտից իմ արյուն էր կաթում, Մարդկանց դեմքերը չէի նշմարում: Եվ հենց այդ պահին վշտից քարացած Դիմեցի նրանց՝ մարված, մթազանած:

«Կորցրել եք օջախներ մարտերում, Բայց նրանք ձեզ մեծ սիրով կապասեն, Եվ նորից իրենց գիրկը կկանչեն:

Լուսինը նորից կշողա շուքով, Մանուկները ձեր նորից կծպտան, Անցած կլինեք արդեն դժոռքով, Փորձանքները ձեզ թեթև կթվան:

Չեք տեսի օրեր ծանրացած երբեք, Կսիրեք բոլոր գույներն աշխարհի, Նորից փառապետ շուրջպար կբռնենք Դաշտերում ու ձորերում մեր Արցախի»...

3

Լուսանում էր: Հետևում էի ես նոր խմբերին, Միրտս ուզում էր դիպչել բոլորին: Գալիս էին անընդհատ ու անցնում, Գալիս էին ու ցավեր բորբոքում:

Մշուշապատ Գորիսն՝ իր նեղ բացատում Եվ ես՝ տխու՛ր, դիտում էինք ամբոխին, Շփոթ հայացքով շեքի անկյունում Նայում էի հոծ եկող խմբերին:

Ինձնից քիչ հեռու գետակն էր խշշում, Լսում էի ես կարկաչը նրա, Ջրի խշշոցից սիրտս էր մորմոքվում, Հուզված, անսթափ թվում էր անա՛հ Կամուրջն է փլվում գետակի վրա:

Բայց սիրտս այդքան կամքից էլ ուժեղ՝ Ուղեցու՛յցն իմ անորոշ բախտի, Սևացած գույնով ճչաց ինձ վրա. «Սթափվի՛ր, չէ որ վերջը չէ կյանքի»:

Վեր թռա տեղից, տեսա լացակում Անցորդների՝ անսպառ ու բազում: Տնքում էր Գորիսը առեղի ցավից, Տրտևում անանց հայերի բախտից: Ցավն անցորդների մեծ էր ու անհուն, Խեղճահար էին, բայց հոգով տոկուն:

Մարդիկ էլ կային շատ չէին լարված, Կարծես չունեին հուզում խորացած: Հոգսատանջ սրտի կայծերը վերջին Այսպես դիմեցին այդ անցորդներին, Աշխարհի մարդկանց բոլոր մոլորված Ուրիշի ցավով չմտահոգված:

«Օ՛ դու, մարդ իմ, թերամիտ ու անհոգ, Չես ուզում Նայել աչքերին նրանց Չես դանդաղեցնում քայլերդ բարվոք, Անցնում ես անդեմ ու Նայում անանց,

Կանգնիր, իմ անցորդ, անհապաղ կանգնիր, Տանջվել են նրանք, տեսել տառապանք, Հույսերը՝ նրանց կիսատ՝ մի թաղիր. Թող ստանան քեզնից շունչ ու սփոփանք:

Համոզված եմ՝ անզոր չես աչքից Եվ չես էլ ուզում թույլ մնալ մտքից: Խեղճերը փախած՝ մընացած անտեր. Կորցրած տուն, անասուն ու թռչուն, Տպում են սրտում կերպարանքը մեր...

Մենք՝ որպես մասնիկ դառն օրերի Կդառնանք միայն բաժին հուշերի Ինչպես անթափանց թանձր մշուշը՝ Դարերով կանգուն ջքնաղ Գորիսի:

Լավ կլինի որ մենք փարվեք Մեր հսկայի արդար խոսքին. «Չարն էլ է միշտ ապրում անմեռ, Անե՛ծք նրա չար գործին»:

4

Շարժվում էին մեկը մյուսին պաշտպան: Զայրում էին ջլատ, հյուժված քայլերով Մեկ-մեկու բռնած, դարձած հենարան, – Սարսուռն էր անցնում նրանց շղթայով:

Բոլորն էլ լուռ էին սով ու ցավ տեսած, Դժոռք էր թվում ճամփեն ահավոր, Նրանց առջևում հայրենիքն էր կանգնած Զայրում էին նրանք վեռ, հանդիսավոր:

Ճամփին տեղ չկար մեքենաներին Ու հագիվ շարժվող մարդկանց հոսքերին, – Եվ հենց այդ պահին նրանք երևի Ցավն էին կրում ամբողջ աշխարհի:

Իմ սիրտը խրոխտ նույնպես ծանրացավ՝ Կրակը նրա փարատվեց մոխրով, Հուզմունքը հոգուս մթնե՛ց, դայկացա՛վ, Կուրծքս բռնկվեց ահռելի ցավով:

Հիշեցի խոսքերը հայտնի պոետի. «Վայ քեզ Հայաստան, խելացի, բայց անզոր... Ամենուր մարդիկ գերի են հաճույքի, Փակ է բերանը հանրային կարծիքի»:

Գիշեր էր արդեն, երբ դժբախտների Վերջին խմբերը միացան իրար: Սուլում էր քամին՝ գալիք հույսերի, Իսկ նրանց սրտից արյուն էր կաթում, Կյանքը տեսիլք էր նրանց պատկերվում:

Չար հուշերը՝ ծվարած նրանց սրտում Անցած տարիների ցավն էին մխում, Դարձել էին թույն, մաղձ՝ անիմաստ կյանքի Եվ պաճառը նրանց մշտական վշտի:

Կանգնեցին նրանք Գորիս քաղաքի Հռչակ վայելած առջև Թատրոնի: Աստղերի վերջին լույսն էր մեռնում Տխրած ամբոխից շշուկ չէր լսվում: Մի երիտասարդ անդորրը խախտեց Դիմեց ինձ այսպես ամբոխի միջից. «Մեր բիրտ թշնամին ամեն ինչ արեց, Նույնիսկ Արցախը մեր շրջափակեց Որ մենք մեր կամքով դուրս գանք այնտեղից:

Հացի կտորներով սկսեցինք սնվել, Մրգի ու քաղցրավենիքի մասին Ոչ մի խոսք անգամ չէր կարող լինել:

Տեսնելով, որ մեր արցախցիները

Այդպես էլ կարող են գոյատևել Եվ հայրենիքը իրենց չքել, Բազում գեներների արկերի ներքո Թշնամին սկսեց Արցախին տիրել. Մենք ստիպված էին այնտեղից փախչել»:

Մեկն էլ գոռաց ամբոխի միջից. «Աշխարհը մեր՝ խուլ ու համր է դարձել, Անարդարությունն է մեր բախտին տիրել, Ինչո՞ւ ենք անվերջ նեղվում ու տանջվում, Միշտ կասկածանքով ու վախով ապրում:

Ինչո՞ւ են սփռել գլխին մեր երկրի Մթություն, խավար, ավեր ու թախիծ: Չէ՛ որ մեր նախնիները արդար Պայքարել են ու զոհվել՝ անդադար՝ Հայրենի հողը պահելու համար:

Էլ դո՛ւք, հզորներ՝ անզոր եք կարծես, – Արդարության կողմը չեք կանգնում, Նավթն արյունից թանկ եք գնահատում»:

Մի տարեց կին էլ՝ դալկացած դեմքով, Դժգույն, դողողուն, դեղնած ձեռքերով, Այսպես սկսեց նա իր կուռ խոսքը. «Մեծ էր հայերի հողը՝ ծովից-ծով՝ Կազմված դաշտերից, բարձր լեռներից: Վայրագ ցեղերը պատերազմներով Դուրս մղեցին հայերին այնտեղից:

Անցան տարիներ... Նպատակը մեր թշնամիների՝ Տիրելը դարձավ հողը հայերի: Դրա համար էլ 20-րդ դարում Կազմակերպեցին Ցեղասպանություն: 21-րդ դարում՝ Թուրքերը բազմաթիվ վարձկաններով Հայերին դուրս բջջեցին Արցախից՝ Դարերից եկած իրենց հողերից: Բայց հիշեցնեմ ձեզ, դեռ 20-րդ դարում Արցախը տվել էին Հայաստանին Հետո միացրին Ադրբեջանին»:

Այս պեղեղ տիկնոջ խոսքերից հետո Հիշեցի խոսքերը մեր մեծ պոետի: «Դու հպարտ չես, իմ Դարաբաղ, – Ինչո՞ւ՞ պիտի հպարտանաս – Նշանեցին քեզ հայի հետ, Բայց թուրքի հետ պասկեցին»:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

5

Ով դուք արևախում դահիճներ անհագ, Թաքնված կաշվի մեջ նենգ սատանայի, Թնդանդանների հարվածների տակ Պղծել եք ուզում հողն Արցախի:

Զեչեցիք հայերին հայրենի երկրից, Դարերով եկած իրենց տներից, Հիմա էլ ասում եք՝ նենգ, ամոթաբար, Որ հայերի դեմ ոչինչ չեք արել, Հայերը՝ վախից իրենք են փախել, Եվ Արևմտյան Հայաստանում էլ Ցեղասպանություն երբեք չի եղել: Ծի՛շտ է դա արդյոք: Սկսեցան անցյալից: Խղճով թող լինենք, չխաբենք միմյանց: Մինչև 12-րդ դարը, բոլոր ազգերը՝ Հայերը, հույները, ասորիները, Եվ մյուս բնիկ ժողովուրդները Ապրում էին իրենց երկրներում, Իրենց անվթար ապագան կերտում:

Դուք եկաք՝ նրանց մեջ մխրճվեցիք Ձևջել ուզեցիք նրանց հիմնովին, Ձեր ոճրոտ սու՛րը պատյան չդրիք

ԳՈՐԾԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՀԱՆԴՈՒԳՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Սերգեյ Առաքելյանը, որը աշխարհահռչակ երգչուհի Գոհար Գասպարյանի կենսագիրն է, հայտնեց, որ առաջին անգամ 1967 թ. Թուրքիա կատարած համերգային այցելությունից հետո երգչուհուն երկու տարով զրկել են արտասահմանյան շրջագայություններից...

– Պաշտոնական այցով Անկարա մեկնող Խորհրդային Միության նախարարների խորհրդի նախագահ Ալեքսեյ Կոսիգինի ղեկավարած պատվիրակության հետ Թուրքիա է մեկնում նաև Գոհար Գասպարյանը: Մեկնելուց երկու ամիս առաջ Մոսկվան պահանջում է երգչուհու համերգային ծրագիրը՝ նախապես զգուշացնելով, որ այնտեղ չլինեն կոմիտասյան ստեղծագործություններ, հատկապես՝ «Կռունկը»: Սակայն անդրդվելի էր Գոհարը: Նա ներկայացնում է ծրագիրը՝ կազմված օպերաների մեներգերից, եվրոպական, հայ, ռուս կոմպոզիտորների ստեղծագործություններից և, իհարկե, կոմիտասյան մարզարիտներից, այդ թվում՝ «Կռունկը»: Մոսկվան առարկում է, պնդում իրենք, սակայն երգչուհին էլ իրեն է պնդում. կամ՝ Կոմիտաս ու հատկապես «Կռունկը, կամ էլ ինքը հրաժարվում է մեկնել: Մոսկվան Անկարային տեղեկացնում է, որ ինչ-ինչ պատճառներով Գոհար Գասպարյանը չի կարող համերգ ունենալ, ինչին հետևում է Անկարայի պատասխանը, թե ժողովուրդը արդեն երկու ամիս է սպասում է ու պահանջում հայ երգչուհու համերգը: Երկար բանակցություններից և երգչուհու համառությունից հետո Մոսկվան անկարող է լինում իր կամքը թելադրել. Գոհարը իր կազմած ծրագրով մեկնում է Թուրքիա: Անկարայում և Ստամբուլում ռադամեսյան



հաջողություններ է ունենում երգչուհին, հիացական հոդվածներ են տպագրվում նրա մասին...

Վերադարձին երգչուհուն Երևանի օդանավակայանում դիմավորում են մեծ ցնծությամբ, իսկ Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի այն տարիների տնօրեն, գրականագետ, թատերագետ, ակադեմիկոս Բուբեն Չարյանը մեր գրուցակցին հանձնարարում է Երևանի արվեստի աշխատողների տանը կազմակերպել հանդիպում նշանավոր երգչուհու հետ՝ «Տպավորություններ Թուրքիայից» թեմայով:

– Մեկ-երկու օրվա ընթացքում կազմա-

կերպեցի այդ միջոցառումը: Արվեստի աշխատողների տան դռան ամրացված հայտարարությունը բավական էր, որպեսզի դահլիճը լցվեր մտավորականներով: Շատերը մնացին ոտքի վրա, նույնիսկ ստել էին բեմեզրին...

Ռուբեն Չարյանի ներածական խոսքից հետո հարցերի տարափ է սկսվել երգչուհուն: Գոհար Գասպարյանը պատասխանել է սիրով, հանդարտ, հաճախ էլ իրեն հատուկ հումորախառն համեմատություններով: Ելադրելով տրված հարցերը, այնուամենայնիվ, խնդրեցինք պարոն Առաքելյանին ներկայացնել դրանցից մի քանիսը, մանավանդ որ չափազանց հետաքրքիր են առաջին անգամ թշնամու երկրում հայտնված երգչուհու ապրումները:

– Բաբեն Ներսիսյանը հարցրեց, թե ինչպիսին էր թուրքական մամուլի արձագանքը: Գոհարը նրան մեկնեց «Զուլխ» («Ետնաբեմ») մշակութային պարբերականն ու ասաց. – Վերցրու ու քո հրաշալի ծայկով կարդա: Բաբենն էլ բեմ բարձրացավ եւ իր առիթնող ծայկով կարդաց հայ երգչուհու մասին հիացական հոդվածը: Այնտեղ մի այսպիսի միտք կար, որը մեխվել է ուղեղումս. եթե թանկ է «Բիթլզները»՝ Լոնդոնի, Շառլ Ազնավուրը՝ Փարիզի, Ջոն Յոլիվուդը՝ Ամերիկայի համար, ապա ավելին էր հայոց սոխակ Գոհար Գասպարյանը Թուրքիայի երաժշտասերների համար. եթե առաջիններն իրենց ելույթներով փոթորկեցին աշխարհը, ապա Գոհար Գասպարյանը նվաճեց այդ աշխարհներն իր կատարած «Կռունկով», «Ծիծեռնակով»...



70

Մինչև չհասաք ձեր նպատակին:

Սրի քաշեցիք դուք բնիկներին, Այնտեղ սերմացած բոլոր ազգերին: Հիմա ասում եք, որ կռվի դաշտում Հաղթել եք բոլոր եվրոպացիներին:

Ձեր կամքին հիմա ես չեմ բռնանա՝ Թե չհաղթեիք էլիք տիրանա: Բայց փշրելով հիմքը ճշմարտության Մեղանչում եք դուք խղճի դեմ պատմության: Խիստ, անասելի մեղքեր եք գործում, Կեղծ, անտրամաբան ստեր տարածում:

Միթե չեք հիշում, որ դուք անխնա Կոտորում էիք բոլոր ազգերին, Բարբարոսաբար փշրում ու ջարդում, Խեղդամահ անում կամ սրի քաշում Կանանց, ծերերին և մանուկներին:

Դու՞ք էիք, արդյոք, որ լուռ հրկիզում Ու տանջում էիք կենդանի մարդկանց, Կախաղան հանում ու անթաղ թողնում Բյուրավոր մանուկների ու կանանց: Եվ ինչքան մայրեր էին հառաչում, Մոխրացած սրտով, պատվազուրկ եղած՝ Տեսնում մանչուկին իրենց երագում՝ Իրենց աչքի դեմ սրահար արված:

Իսկ Եվրոպայի զինվորներն այնժամ Ձեր հարազատ կանանց ու ծերերին, Հաշմանդամներին, երեխաներին,

Որ գալիս էին ձեր հետ միասին, Ոչ թե սպանում էին կամ գերի վերցնում Այլ պատասպարվելու տեղ էին փնտրում:

Եվ այդպես քանի դարեր սլացան, Անդառնալի պատմության գիրկն անցան, Մինչև հայտնվեց Աբրուլ Համիդը, Դժոխքի արքա «Կարմիր սուլթան»-ը՝ Որ տասնիններորդ դարի վերջին Նոր թափ տվեց հայերի ջարդերին :

Իսկ քսաներորդ դարի հենց սկզբին, Ամբողջ մարդկության աչքերի առաջ Թուրքերը հայի արցունքով արբած Ցեղասպանություն իրագործեցին:

Բազում հայերի սրի քաշեցին՝ Մորթեցին, այրեցին, խեղդեցին, Իրենց հայրերի հողից զրկեցին: Ուզում էին ամբողջ ազգին վերացնել, Հայոց արցունքն էլ արյան վերածել, Հայոց արմատի արմատն էլ ջնջել:

Անթիվ, անհամար նահատակների Ամմեղ պատժված լուռ հետնորդները Չեն մոռանա իրենց հարազատների, Խոցված սրտերը, եղեռնով դաջված, Երագանքները անկատար թաղված:

ԳՆՈՒՆ ԵՐՐՈՐԴ

Մեր նախնիները միշտ պաշպանել են Իրենց պատիվը, հողն ու հավատը,

Եվ արդարամիտ հիմքերի վրա Աստիճանաբար ուժեղացրել են Չար թշնամու դեմ մղվող պայքարը:

Բայց երբեմն էլ չուսումնասիրելով Իրենց իսկական ցավի պատճառը, Նենգ, խարդախ ու խորամանկ թշնամուն Մոտիվ բարեկամի տղե են դրել, Իսկ սրիկա ու չար շահամոլին Սրտաբաց, անկեղծ, տուն հրավիրել:

Հիմա փոխվել են հին պայմանները Շատ Լուրբ է դարձել մեր դրությունը Կանգնել ենք մենակ մեր լեռների մոտ Մեր որդեկորույս ծնողների հետ:

Հիմա պետք է մենք շատ սթափ լինենք, Եվ հիմնովի ու ճիշտ ուղի բռնենք, Միշտ ամենաճիշտ ու ազգասպաստ Զաղաքականություն պետք է վարենք:

Նահանջելու տեղ մենք արդեն չունենք, Չպետք է երբեք տարամիտ լինենք, Նահատակների խիստ հրամանով Եվ մեր ազնիվ ու փառահեղ շանքով Անպայման պետք է համախումբ լինենք:

Եվ թե՛ կամքով մենք ուժեղ լինենք, Բախտը՝ մեզ ընկեր՝ կծպտա սիրով, Եվ չարը երբեք չի հաղթի բարուն, Ու սրտերում մեր կլինի գարուն:



Արդեն բոլորովին հայաթափ Արցախն սպասում է իր զավակներին: Անհնար է թշնամուն թողնել Մռավն ու Դիզակայտը, Քիրսու Յոզանցասարը, Թարթառն ու Զակարին, Կարիառը: Գայոս սրբավայրերը՝ Դաղիվանքն ու Գանձասարը, Ամարասն ու Դազանչեցոցը, Ծիծեռնավանքն ու Վարազգունը, Մկնատամի խաչը, Կատարոն ու Ամուտեղը... բոլորը կանչում ու կանչում են: Իսկ արցախցին, որ 30 և ավելի տարիներ դարձել էր իր երկրի տերը, վերակառուցել իր սրբատները, կառուցել աշխարհի ամենածոցովորդավար պետությունը, բարիք էր ստեղծում իր այգում ու հանդում, այսօր դարձել է բռնի տեղահանված և ապաստան գտել 33 տարեքան մարդերում, Երևանում, կան արդեն արտերկրի գնացողներ:

Երկիր վերադառնալու, արցախահայությանը մշտապես համախումբ պահելն այսօր կարևոր երևույթ է, և յուրաքանչյուր ոք պետք է աշխատի այդ ուղղությամբ: Այս առումով կարևոր դեր ունեն Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Երևանում և այլ վայրերում տեղահանված արցախցիների կողմից ստեղծած մշակութային ու հասարակական, գիտական կազմակերպությունները: Դեկտեմբերի 11-ին Երևանում Զայ բարեգործական ընդհանուր միության դահլիճում, կայացավ «Զաթ-բաթ հեքիաթ» նախագիծը, որը միտված է Արցախի մշակութային ժառանգության պահպանմանը և կազմակերպվել էր Lamedia.am-ի և ԱՅՅՈՒՎԻ հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի կայացմանն աջակցել էին Yeremyan Products-ը («Երեմյան Փրոջեքթսի»), ԱՅ Կառավարության օպերատիվ շտաբը և «ԴիզակԱրտ» մշակութային երիտասարդական կենտրոնը /ՄԵԿ/: Երեկոն վարում էր նախագծի կազմակերպիչներից «ԵսՊուՄենք» ԶԿ նախագահ Լիաննա Աղամյանը: Զայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանը ողջունեց ներկաներին, կարևորեց նման ծրագրերի դերը՝ արցախահայությանը համախումբ պահելու և մշտապես երկիր վերադառնալու մասին երազելու համար: Արցախյան բարբառով ներկայացրեց Տերունական աղոթքը՝ հավատ հայտնելով՝ Տերը գորավիզ է լինելու մեր երազանքներին: Ողջույնի խոսքով հանդես եկան նաև ԶԶ-ում Արցախի Զանրապետության օպերատիվ շտաբի պետ Միքայել Վիրաբյանը, «ԴիզակԱրտ» ՄԵԿ համահիմնադիր Երազիկ Ավանեսյանը, «Երեմյան Փրոջեքթսի»-ի ներկայացուցիչը: Ընթացքում Երևանի հաղորդաթի մասնակետը, ովքեր հիմնականում «ԴիզակԱրտ» ՄԵԿ սաներ են, պատմում են հայկական ժողովրդական հեքիաթները Զաղրուքի բառ ու բանով, ավարտում անիմացիոն լուծումներով: Եղավ նաև համերգային մաս. «ԴիզակԱրտ» ՄԵԿ-ի սաները նվագախմբի ուղեկցությամբ կատարեցին արցախյան ժողովրդական երգեր: Զանդիպումը

եզրափակվեց Արցախյան խնդրի ներկա վիճակի քննարկմամբ: Զանդես եկան Արցախի Մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ) Գեղամ Ստեփանյանը, ԱՅ կրթության, գիտության, մշակույթի նախկին նախարար Լուսինե Ղարախանյանը, մշակութաբան Արմինե Տիգրանյանը, Փիլիսոփայական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, ԶԶ ԳԱԿ թղթակից անդամ Ալեքսանդր Մանասյանը և ԱՅ նախկին ՄԻՊ, պետնախարար Արտակ Բեգլարյանը:

Լուսինե Ղարախանյանը ներկայացրեց «Մշակույթը առաջնային տիրապետման իրավունքի առանցքում» բանախոսությունը: Իր ֆեյսբուքյան էջում գրել է. «Մեր ինքնության խորը և արխայիկ շերտերը մեզ հանգիստ չեն տալիս: Մենք իսկապես հոգեբանական ծանր վիճակում ենք: Այսօր մասնակցել են Զաթ-Զաթ նախագծի բացմանը, որտեղ կարևորել են Արցախի մշակույթի, մասնավորապես բարբառի առաջնային տիրապետման իրավունքի դերն ու այն օրակարգ մտցնելը: Արցախի բարբառը վտանգված է: Զաղրուքի երեխաները բարբառով հեքիաթներ ներկայացրեցին: Խոսվեց Արցախի մշակույթի, կյուրական և ոչ կյուրական մշակութային ժառանգության պահպանման կարևորության մասին: Այս պայթյառը և այս բնագիծը շատ կարևոր է, բայց բարբառն առանց ֆիզիկական Զայրենիքի աշխարհագրության, լանդշաֆտի ու հողի հետ մերձեցման չի կարող պահպանվել: Տո՛ն պետք է գնանք: Շնորհակալ են «DizakArt» կենտրոնին՝ գաղափարականության և կատարած աշխատանքի, իսկ Լիաննա Աղամյանին՝ մտահղացման, ծրագրի իրականացման և հրավերի համար»: Մշակութաբան Արմինե Տիգրանյանը հանդես եկավ «Արցախահայության լեզվի և ինքնության պահպանության խնդիրը մշակույթի իրավունքի համատեքստում» գեկուցով: Իր խոսքում նաև ասաց. «Շնորհակալ են բոլոր այն մարդկանց, ովքեր կենսունակ են պահում արցախյան բանն ու բառը, այդ թվում առանձնահատուկ երախտից «DizakArt» ՄԵԿ-ին երազիկ Ավանեսյանի և Լիաննա Ղետրոսյանի ղեկավարությամբ, ովքեր այսօր և հավետ նպաստել և նպաստում են Զաղրուքի աշխարհի և ողջ Արցախի մշակութային ինքնության պահպանությանը: Կենտրոնի սաները այսօր հուզեցին բոլորիս իրենց հողն ու ջրի, բնության ու հայրենիքի կարոտը մեզ փոխանցելով Զաղրուքի բարբառով հեքիաթների միջոցով»: Նախագծի հեղինակները հատկապես կարևորել էին, արցախյան ինքնության ու բարբառի առանցքային գաղափարների կենսունակության խնդիրը: Եվ պատահական չէր, որ երեկոյի ողջ ընթացքում հնչեց Արցախի բարբառը:

ՃՕ

տիրեց մեր սրտերին...

Իսկ թե ինչո՞ւ այդ այցից հետո երգչուհին երկու տարով զրկվեց արտասահմանյան շրջագայություններ ունենալու իրավունքից, պարոն Առաքելյանը ասաց իրականում. — Զամերգից հետո Թուրքիայի նախագահը իր հարկի տակ կազմակերպել է ճաշկերույթ, որին ներկա է եղել նաև Գոհարը: Նախագահի խնդրանքով երգչուհին երգել է «Կռունկը»: Երկրորդ անգամ է խնդրել կատարել նույն երգը, որից հետո դիմել է երգչուհուն ու հարցրել, թե ինչու են այդքան տխուր մեր երգերը: Գոհարն էլ գայրույթով պատասխանել է՝ այդ հարցը դուք ձեզ պիտի տաք: Ի հեղե, երբ այդ դիպվածի մասին Գոհարը պատմեց մտավորականների հետ հանդիպմանը,

լսվեց Խորեն Աբրահամյանի ձայնը՝ Գոհար ջան, կուկլա ջան, բոլոր դեպքերում դու ոչ բարեկամ երկրում էիր, եղա՞նք քեզ համար տհաճ դեպքեր: Երգչուհին մի պահ լռեց, ապա ինքնաբերաբար հայտարարեց՝ առաջին տհաճությունը պատվիրակության ղեկավար Ալեքսեյ Կոսիգինի ներկայությունն է... Ապա պարոն Առաքելյանը ներկայացրեց երգչուհու պատմածը.

— Թուրքիայի նախագահի բնակարանից ինձ ուղեկցեցին հյուրանոց: Առավոտյան երբ դուրս եկա սենյակից, տեսա դռան մոտ դրված ծաղիկներով հսկայական զամբյուղ: Մտածեցի, որ բերողը հայագրի երաժշտանքը կլինի, մոտեցա, որ վերցնեմ, նկատեցի այցեքարտ: Զնեց այդ պահին ինձ մոտեցան սնագետս երկու պաշտոնյա և ռուսերենով ասացին, որ հյուրանոցի ճեմարահում ինձ սպասում

է ընկեր Կոսիգինը, որպեսզի միասին այդ զամբյուղը տանենք Աթաթուրքի գերեզմանին... Կարծես ինձ շանթահարեցին, ճչացի՞ ի՞նչ... հեռու տարեք այդ գարշանքը և արագ իջա ճեմարահ: Ինձ տեսնելով՝ Կոսիգինը վեր կացավ, մոտեցավ, ասելով՝ օ՛, մեր հայրապետություն, սիրելի Գոհար Միրխայլովա... Ես չթողեցի, որ նա շարունակի, ասացի՝ այդ ի՞նչ եք որոշել, մի՞թե մոռանում եք, որ ես այս երկրի կողմից կազմակերպված նախճիրի զոհ դարձած մեկուկես միլիոն հայի դուստր եմ, ինչպե՞ս կարող եք ինձ նման բան առաջարկել: Կոսիգինն անակնկալի եկավ, լռեց, ապա նեղ մռնչաց՝ այն այդպե՛ս...

Լսելով Գոհարի հանդուգն պատասխանի մասին, ինչը ընդունել էր հոտնկայս ծափերով, ոչ ոք չէր կասկածում, որ Մոսկվան անհետևանք չի թողնի երգչուհու արարքը:

Հետահայաց ... դեպի ապագա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Համատարած աղմուկի մեջ արժեքավոր խոսքը չի լսվում: Ավելին, մերօրյա հանրային, քաղաքական, միջանձնային հարթություններում գեներացվող աղմուկի մեջ խոսքն ընդհանրապես դադարել է կշիռ ներկայացնել: «Ազատություն», «Ժողովրդավարություն» հասկացությունները ձեռախեղվեցին՝ վերածվելով սանձարձակության ու ամենաթողության, որտեղ խլանում է բանականության ձայնը: Գտնվելով այդ քայքայիչ համակարգում, անհատը, ժողովուրդը չի կարող հաղթահարել իրեն պարտադրված անկումը: Պետք է առնվազն մեկ մակարդակ վեր բարձրանալ:

Այս օրը՝ հեռավոր թվացող 1990 թվականի հոկտեմբերի 9-ին լույս տեսավ խորհրդանշական անունը կրող «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը, որը պետք է դառնար նորանկախ հայկական պետության տարեգիրը, հայելին: Օրաթերթի էջերում գրվեցին եւ պատմությանն ի պահ տրվեցին վերջին ավելի քան երեք տասնամյակի քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական, մշակութային, հոգեւոր կյանքին վերաբերող իրադարձություններ, գնահատականներ ու վերլուծական հոդվածներ: Առանցքը հայկականությունն էր ու պետական շահը:

Արդեն չորս ամիս է թերթը չի տպագրվում: Ցավեցնող է ոչ միայն հայկական երրորդ հանրապետության պաշտոնաթերթի ընթացքի կասեցումը (կրկին գրչի մեկ հարվածով), այլ այն անտարբերությունը, որը դրսևորվեց հանրության կողմից: Արձագանքներ, այո՛, եղան, բայց այն համարժեք չէր կատարվածին: Ի վերջո, գաղափարական, արժեհամակարգային անկումային պայմաններում այլ բան թերեւս պետք էլ չէր սպասել: Գրավոր խոսքը բոլորովին այլ ուժ ունի, գրավոր խոսքով մտքեր ձեւավորելու, ինչու չէ՛ նաեւ հեղափոխելու խնդիրն ավելի բարդ է: Ներկայումս, երբ ընկալվում է միայն դյուրամարս, «պոպկորնային» մակարդակի խոսքն ու միտքը, մտածելու առիթ ստեղծող ասելիքն այլեւս տեղ չունի: Երբ կլռի աղմուկը, այդժամ լսելի կդառնա խոսքը:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը կա, պարզապես այն փակված է ինչպես Միտի դուռը:

● ԶԿԱՆ ԱՆՏԱԿԱՆԷ ԱԶԳԵՐ, ԲԱՅՅ ՀԱՅ ՏԱԿԱՆԸ ԿՄՏԱ ԱՆՄՐՅԵԼԻ:
● ՆԵՐՔԻՆ ԹԵՆԱՄԻՆ ԶԻՆԱԿԻՑ ԵՆ ՈՐ ԵՐԱՅՈՐ ԱՐՏԱՔԻՆ ԹԵՆԱՄՈՐ:
● ՄԵՆԶԵԿ ՈՐ ԶԿԱՐՈՂԱՆԱԷ ՆԵՐՔԻՆ ԹԵՆԱՄԻՆ ՍՊԱՆԵԼ, ԱՆԿԱՐԵԼԻ Ե, ՈՐ ԱՐՏԱՔԻՆ ԹԵՆԱՄՈՐ ԱԶՏԱԿԵԼ ԿԱՐՈՂԱՆԱԷ:
● ԹԵՆԱՄՈՐ ՄԻ ՀԱՆՏԱՆԷ ՆԵՐԵԼ՝ ՆԵՆԱԿՈՒՄ ԵՆՈՐԵՐՆ ԱՐՏՈՆԵԼ:
ԳՐԵԳՈՐ ՆԺԴԵՂ

90

Առանձնապես ներկաներին հուզեցին «ԴիզակԱրտ» կենտրոնի սաների ելույթները: Ընդհանրապես մեր երեխաները ներկաներին հայրենի Արցախի իրենց հող ու ջրի, բնության ու հայրենիքի կարոտը փոխանցեցին Հաղորդի բարբառով հեքիաթների ու երգերի միջոցով: Բարբառով կարոտի երգ հնչեցրեց նաև փիլիսոփա Ալ. Մանասյանը: Դահլիճում մոտ 2 ժամ տիրում էր բռնի տեղահանման ծանր իրողությունը և հայրենի Արցախ վերադառնալու փափագը, հույսը, հավատը: Իսկ դրան հասնելու համար նախ չպետք է մոռանալ հայրենի մշակույթը, պապերի թողած մշակութային ժառանգությունը, որի կարևոր տարրերից է տեղական բարբառն ու խոսվածքը, սովորույթները, կենցաղը: Ներկա էին հիմնականում արցախցիներ՝ մտավորականներ, նախկին զինվորականներ, մշակութային ու հասարակական գործիչներ, ուսուցիչներ, լրագրողներ, պետական այրեր, հյուրեր:

Զարմանք, գայրույթ, ափսոսանք...



Զգիտեմ, թե ազգային-պետական այդ ի՞նչ շահեր են կառավարությանը մղել (ավելի ճիշտ՝ դրող) վերացնելու «Հայաստանի Հանրապետություն» թերթը:

Եվ կա՛ արդյոք մեկը, մի որեւէ ընթերցող, թերթում տպագրվող լրջախոհ մի մտավորական, որն ասի, թե սա հիմնավոր, ավելին հույժ «խնաստուն» որոշում է:

Շենք այսօրինակ որոշումներն են լավագույնս բնութագրում որոշում կայացնողի կառավարչական եւ բարոյական կերպարը, մտավոր հասունության չափը, հայոց պետականության հզորացման եւ ապագայի հանդեպ իրական վերաբերմունքը:

Հատկապես ներկայիս հայաստանյան իշխանության համար կարող էի մեջբերել Գյոթեի «Ֆաուստից» մի վկայություն՝ «Իշխանություն, իշխանություն. երբ ես եղել դու իմաստուն» (հուսով եմ՝ գլխավոր խմբագիրը սա չի հանի):

Հիշում եմ՝ որպես ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, թե ի՞նչ խանդավառությամբ 1990 թ. սեպտեմբերին հիմնադրեցինք անկախության ճանապարհը բռնած մեր պետության օրենսդիր մարմնի պաշտոնաթերթը, ի՞նչ հուզմունքով դիմավորեցինք առաջին համարի լուսընծայումը. այսօրվա պես աչքիս առաջ է հոկտեմբերի 9-ի այդ համարը: Մա երիցս խորհրդանշական էր, «Մովետական Հայաստան»-ի փոխարեն հայպարտ ու շողշողուն «Հայաստանի Հանրապետություն» (այդպես դասական ուղղագրությամբ կամրջելով երրորդ հանրապետության անվանումը առաջինին):

Թեպետ հետագայում փոխվեց թերթի կարգավիճակը, բայց մեր հիշողությունից հնարավոր չէ ջնջել այն փաստը, որ թերթը ծնունդն է անկախության անկասելի ձգտման, ինքնուրույն ապագա կառուցելու վստահության, Հայաստանի, Արցախի եւ սփյուռքի հայության միավորման, համազգային խնդիրները համախմբված լուծելու վճռականության:

Տողերիս հեղինակին բախտ է վիճակվել աշխատակցելու «Հայաստանի Հանրապետության» առաջին գլխավոր խմբագիր, լուսահոգի Այդին Մորիկյանի, ապա մյուսների՝ Մեդրոպ Հարությունյանի, Լիզա Ճաղարյանի, Աշոտ Աղաբաբյանի եւ ներկա խմբագիր Արթուր Դարագոյզյանի հետ:

Որպես լավատեղյակ ընթերցող ինձ թույլ տամ մի համեմատություն անել: Մեր թերթի պատմությունն անցել է իր կայունացման եւ հզորացման, հեղինակությունն եւ հարգանք նվաճելու տարիները, ապա միջնադարյան մոայլ եւ անպտուղ շրջանը (2001-2019 թթ.), այնուհետեւ՝ վերածննդի դարաշրջանը, երբ թերթը թե՛ բովանդակության, թե՛ ձևի առումով կատարելապես վերափոխվեց: Թեպետ դժվարությամբ, սակայն «Հայաստանի Հանրապետությունը» վերագտավ իր ընթերցողին, դարձավ սպասվող եւ կարողացվող թերթը:

Ու մ կարող էր սա դուր չգալ, ու մ քիմքին հաճո չէր թերթի անվանումն իսկ. չգիտեմ, բայց կիմանանք վաղ թե ուշ. հավատում եմ մեծն Շեքսպիրին՝ «Չափի գործերը կգան հրապարակ...»:

Նման որոշումը ի՞նչ արձագանք պիտի ունենա զարմանք, գայրույթ եւ ափսոսանք...

Իսկ որպես վերջին ասելիք՝ հայտնեմ ընթերցողիս շնորհակալությունը թերթի ներկայիս խմբագրակազմին այս վերջին տարիների վերլուծական հոդվածների, բովանդակային հրապարակումների, ուշագրավ նյութերի, գանազան տեղեկությունների հմուտ ու գրավիչ մատուցման համար: **Կարծում եմ՝ թե՛ թերթն ինքը հնարավորություն ունենար, ձեզ կասեր Թումանյանի վերջին խոսքի պես՝ «Ղուչի՛կ կացեք»:**

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վալերի ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆ



Լյուբերցիի «Արվեստի տուն»-ը, 2023թ. մայիսի 28-ին, հերթական անգամ, իր հյուրընկալ դռներն էր բացել լյուբերցաբնակ մեր հայրենակիցների (ոչ միայն) առջև:

Իսկ ինձ այստեղ էր բերել Մետրոպ Մաշտոցի անվան կիրակնօրյա կրթօջախի կանչը:

Ամեն տարի Լյուբերցիի հայ համայնքը (ՊԱՕ) տարին եզրափակում է հաշվետու համերգով:

Թվում էր, թե Մոսկվայի արվարձաններում երկար տարիներ ապրելով, մեր հայրենակիցները հեռացել են հայ մշակույթից, բայց այլ բան էր ասում լեփ-լեցուն համերգասրահը:

«Հայաստան» երգի հնչյունների տակ բեմահարթակ է մտնում դպրոցի աշակերտների բազմանդամ խումբը՝ ծածանելով հայկական եռագույնը և համայնքի խորհրդանիշ հանդիսացող դրոշմը: Գովերգեցին Հայրենիք, խաղաղություն:

Բեմահարթակ հրավիրվեց համայնքի ղեկավար Տիգրան Միքայելյանը: Ընդհավորական խոսք հղեց մարզի ղեկավարությանը, պատգամավորներին, շնորհակալագրեր հանձնեց նրանց, ովքեր օգնում են համայնքին: Հանձնվեցին պատվոգրեր նաև դպրոցի մանկավարժներին:

– Անցած ուստարում, – ասաց նա, – աշխատել ենք բավականին արդյունավետ, տարին սկսել ենք 340 աշակերտով, եռահերթ, չորս դասարանով, գործել են տարբեր՝ երաժշտական, խաղային, սպորտային խմբեր: Նշել ենք հայկական էթնիկ տոնակատարությունները, ապրիլի 24-ի եղեռնական օրը, կատարել ծառատունկ՝ հիշատակի պուրակում և այլ միջոցառումներ: Իհարկե դեռ ունենք շատ անելիքներ:

Դպրոցի 84 ավարտական աշակերտ ենք ճանապարհում սիրելի երեխաներ, դուք մեր ազգի հպարտությունն եք, որտեղ էլ լինեք՝ ուսանող, գործարար, աշխատող, ներկայացրեք հայի արժանապատիվ կերպարը՝ սիրեք Հայրենիքը, ընտանիքը, ընկերներին: Այսօր մեծ տերությունները գենքի պայքարի մեջ են, իսկ մեր գենքը պետք է լինի լուսավորությունը, գիտության տարբեր բնագավառների նվաճումը:



Ասյա ՉԱՆԱԼՅԱՆ, Լյուբերցիի կիրակնօրյա հայկական դպրոցի հիմնադիր ուսուցչուհի

Բարի երթ՝ դեպի լուսավոր ապագա: Համերգի մասին. աշակերտները հանդես եկան խմբակային պարերով, երգերով, շատերը անհատ կատարումներով: Ելույթ ունեցան նաև դպրոցի նախկին սաները՝ Զրիստինե Բեգլարյանը, Նարինե Տոնյանը, Նառա և Մելինե Հովհաննիսյան քույրիկները և Մերի Թաղևադյանն իր գեղեցիկ, հեզաճկուն պարով:

Դահլիճը հայաստանոտ էր, բեմահար-

թակը՝ հայաշունչ, ողողված հայաբառ երգի, հումորի հնչերանգներով: Հուզվեցի, հպարտության զգացում ապրեցի, որ դժվարությամբ հիմնված կիրակնօրյա դպրոցը շարունակում է գործել, բազմանալ, տիրապետել հայոց լեզվին և հաճույք պատճառել բոլորին:

Ինքնին հասկանալի է, ինչպես նշեց Տիգրան Միքայելյանը, կրթությունը բացում է իմաստունի և տաղանդավորի դուռը: Ահա այսօր հանդես եկան ջրի գույլ կաթիլների նման անհատներ, նրանք են կերտելու մեր ապագան, պայքարելու և արարելու: Մեր ժողովուրդը ունեցել է շատ օրհասական պահեր, այս սերունդը պետք է ապավինի երիցս բզկտված մեր ժողովրդին: Թող բազմանա հայի գենը: Ինչպես Մեծն Պարույր Սևակն է ասել. «Թող մանուկներ շատ ծնվեն և ծնվեն այլ ճակատի գրով: Նրանց կնունքը լինի որտեղ կլինեն, բայց հարսանյաց հանդեսը կատարվի Հայաստանում և հայուհու հետ...», կասեք ինչո՞ւ:

Ես հայուհի հարս եմ ուզում, Որ ծաղկի ազգն իմ տանից, Որ չպոկի իմ մայր լեզուն, Իմ թռռնկիկ բերանից...
Հովհաննես ՇԻՐԱԶ

Սա միջանկյալ: Իրենց ելույթներով հանդիսատեսին դրական լիցքերով պարուրեցին կայացած պարային խմբերը:

«ԱՆԻ» – Լյուբերցիի երկակի մրցանակակիր (Գրանպրի), գեղարվեստական ղեկավար՝ Արփինե Հակոբյան, բալետմեյստեր՝ Գուրգեն Սինսայան:

«ՀԱՅՈՐԴԻՔ» – 20-ամյա կենսագրությամբ (տարբեր մրցանակներ կրող), գեղ. ղեկավար՝ Անահիտ Սարգսյան:

«Եսբիզ» – գեղ. ղեկավար՝ Նարեկ Ծատուրյան:

«ՆՈՒՆԻ» – գեղ. ղեկավար՝ Անահիտ Հարությունյան:

«ԿԻԼԿԻԱ» – գեղ. ղեկավար՝ Սամվել Ասատրյան:

«ԶԻՎԱՆԻ» – գեղ. ղեկավար՝ Սիրանույշ Գալստյան և շատ անհատ դերասաններ:

Այս խմբերից յուրաքանչյուրը պարային տարբեր նազանք-



Զախից՝ Իսանում Ասատրյան, Տիրա Հովհաննիսյան, Հասմիկ Պապյան, Հասմիկ Վարդանյան, Մարինե Մխիթարյան

110

ներով, խրոխտ շարժումներով, քնարածին գեղագիտական վառ արտահայտչամիջոցներով ներկայացրին հայ ժողովրդի մտածողությունը, հոգեֆիզիկական աշխարհը, ապրած կյանքը:

Համերգի ընթացքում հանդիսատեսն իրեն զգաց բազմաազգարանոց հայկական մեկ՝ կայացած ընտանիքում: Կարծիք կա, որ հայերին չի կարելի հաղթել, հայերին կարելի է բաժանել:

Այս կարծրատիպը հաղթահարել է Լյուբերցիի հայ համայնքը. շնորհիվ՝ Տիգրան Միքայելյանի մտքի, ոգեշնչող ուժի, միջոցների ու Էներգիայի ամուր միասնության և հայության նվիրյալ, խելացի ու գործունյա համանախագահների: Նրանք շերտ համագործակցությամբ հասել են անբակտելի միասնության՝ մեկ ընտանիք, մեկ բռունցք: Նշվածի ապացույցն էր այս միջոցառումը և նրանց կատարած աշխատանքը:

Միջոցառումը եզրափակեց դպրոցի «Ուրախների և հնարամիտների» նորաստեղծ թիմը:

Մի գեղեցիկ սկիզբ հումորային ավարտով:

Այսպիսով ներկայացվեց մեծ աշխատանք՝ հումորածին ժպիտներով, ելևէջներով, մեծ ու փոքր հանգավորումներով, ասույթներով գեղարվեստական համաչափությամբ ու ժամանակակից երանգներով:

Լռեցին երկարատև ծափահարությունները, ավարտվեց հանդիսությունը, իսկ մասնակիցներիս հոգում մնաց հայի հաստատակամության, հավերժության գաղափարը, համախմբված աշխատանքի արգասիքը, սերունդներին փոխանցվող հայապահպանության ազգային ժառանգությունը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Նոր Տարվա նախաշեմին ենք՝ 2023 թվականի դեկտեմբերի 24-ը:

Այցելություն Լյուբերցիի Մերոպ Մաշտոցի անվան կիրակնօրյա հայկական կրթօջախ: «Գործկրար» նախագծի հեղինակ և հիմնադիր Վահրամ Բեկչյան, բանաստեղծ Սամվել Ավդալյան և ես՝ ձեր խոնարհ ծառան դպրոցի հիմնադիր ուսուցչուհիս: Իսկ մեզ իր անձնական ավտոմեքենայով՝ Սամվել Մանասյանը, ով Ջավախքի մեր հայրենասեր եղբայրներից է, ունի տպագրված շատ բանաստեղծություններ, սիրով համաձայնեց տանել Լյուբերցիի կիրակնօրյա հայկական դպրոց և վերադարձնել Մոսկվա:

Մոտենում ենք շենքի մուտքին, լսվում է աշակերտների ուրախ զուրկ: Ներսում՝ միջանցքով քայլելիս լսվում էին հայկական երաժշտության հնչյուններ, դասական պոեզիայի ոսկե ֆոնդից բանաստեղծական հատվածներ, դիոլի ու դուդուկի անզուգական ելևէջներ, պարային շարժումների խրոխտ դրփյուններ, այսինքն գտնվում էինք մի փոքրիկ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:

Իմ Հայաստան, ուր էլ լինեմ խոսք ու մեղեդի դարձած դու ինձ հետ ես, ինձ հետ ես քո հաղթական ու կրակոտ Մասուցիների պարով...

Ներկայացնեմ ինձ հետ այցելած ընկերներիս.

ՎԱՅՐԱՄ ԲԵԿՉՅԱՆ. «Գործկրար» ամսագրի ու նրա հավելված «Բարի առավոտ» թերթի գլխավոր խմբագիր, Ռուսաստանի լրագրողների Միության անդամ, Հանգվածային լրատվական միջոցների վաստակավոր աշխատող, նաև (ՃԱՕ) համայնքին համագործակցող ու լավ բարեկամ:

Տարիներ շարունակ (25 տարի) անմաքորոջ նվիրումով հայոց լեզվի փարոսը վառ է պահել՝ լուսավորելով օտարության մեջ ապրող հայերիս: Վահրամ Բեկչյանը ներկայացրել է սարյանական գույներ, հնագույն խաչքարեր, բերդաքաղաքներ, վանքեր ու ավերված եկեղեցիներ, որոնք այնքան ցավ են տեսել, բայց և հույսով լցված պատարագ ու աղոթք արել: Նա անտրտունջ ընդառաջել ու տպագրել է Վերածնված Հայաստանի ու հայու-



Ջախից՝ Համիկ Պապյան, Ասյա Չախալյան, Տիգրան Միքայելյան, Վահրամ Բեկչյան

ԳՈՎԷ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

թյանը նվիրված հոդվածներ, պատմական իրողություններ, բանաստեղծություններ և այլն:

Մեր այս այցելությունը նույնպես հայնապաստ խորհուրդ ուներ. Լյուբերցիի կիրակնօրյա հայկական դպրոց հաճախող 300 սաների համար պարոն Բեկչյանը պատրաստել էր «Հնագույն Արցախի ճարտարապետական մարգարիտներ»-ի և «Հայոց մայրաքաղաքներ»-ի պատկերազարդումով 2024 թ. օրացույցներ, նաև այլ գրքեր ու թերթեր:

Իսկ «Գործկրար» ամսագրի խմբագրության անունից նաև **ՇՆՈՐՀԱՎԱԼԱԳԻՐ**, որը հանդիսավոր ձևով հանձնեց համայնքի ղեկավարին. «Վնահատելով՝ Տիգրան Սոսի Միքայելյանին՝ հայապահպանության գործում նրա մեծ ներդրումը համայնքում, խմբագրության հետ ունեցած համագործակցությունը, ծրագրերի իրականացման նկատմամբ գործնական աջակցությունը»: Շնորհավոր և նորանոր ձեռքբերումներ:

Նշենք, որ համայնքի աշխատանքներին իրենց գործունեությամբ նպաստում են.

- մանկավարժական կոլեկտիվի ջերմ մթնոլորտի ամկայությունն ու լավ աշխատանքը, տնօրեն Համիկ Պապյան,

- ծնողների պատրաստակամությունը,

- համանախագահների համախմբված աշխատանքը, այս ամենը հանգեցրել է նաև հայ բնակչության բարդ խնդիրների որոշակի լուծմանը: Այսօր էլ շարունակվում են աշխատանքները, ինչպես նշվեց, դեռ շատ անելիքներ ունեն:

Իմ համեստ կարծիքով մարդկային հարաբերություններում հավատարմությունը, վստահությունը, խիղճը, հայրենիքի նկատմամբ սերն ու պարտքի զգացումը կարող են բարին արարել, ինչպես (ՃԱՕ) համայնքում է:

Մեր հաջորդ ընկերը՝ հայրենասեր բանաստեղծ Սամվել Ավդալյան է:

Մեր հայրենիք Արարատյան Աստվածային սրբություն, Քո ոգով ենք դյուցազնական Մենք նվաճել հաղթություն:

Փառք քեզ երկիր մեր Հայաստան, Հավերժ կանգուն մեր ամրոց, Մեր ձիրքերի կանաչ ուստան, Մեր արշալույս ոսկեգոծ:

Կոփվել են մեր շարքերն հնուց ժամանակի բոցերում, Չեն երկնքի ահեղ քամուց Աշխարհաշեն գործերում:

Փայլում է քո պայծառ ներկան հաչքարագարո տաճարով, Լուսավոր է քո ապագան Որդիներիդ հանճարով: Փառք քեզ երկիր մեր Հայաստան, Հավերժ կանգուն մեր ամրոց...

Սամվել ԱՎՐԱՍՅԱՆ

Հարգարժան ընթերցող, այսպիսով, մեզանից յուրաքանչյուրն իր հնարավորության սահմաններում պետք է ծառայի հայապահպանությանը: Ամեն ինչ պետք է անել, որ օտարության մեջ ապրող երիտասարդ սերունդը հայ մաս, հայոց լեզվի կանթեղը վառվի այնտեղ, որտեղ ապրում է թեկուզ մեկ հայ ընտանիք:

Եվ թող ամենագոր Աստծո աջը հովանի ու պահապան լինի համայն հայությանն ու հայատարածքին՝ այն ժայռին բազմած բերդին, որ ՀԱՅՐԵՆԻՔ ենք անվանում, որ հայը իր հողում ապրի ու գործի հայի գեները:

Օրն ավարտվեց ջերմ ու ազատ շփումներով: Միմյանց քաջակերտեցինք 2024 թվականի պլաններ ամրագրելով, թող նոր տարին բոլորիս համար խաղաղության, ձեռքբերումների, նորագույն նվաճումների տարի լինի, առաջ նայենք լավատեսությամբ:

Հրաժեշտ ենք տալիս մեկ մեկու՝ հայապահպանության սուրբ գործին անմաքորոջ նվիրումի խոր գիտակցությամբ:

Ասյա ՉԱԽԱԼՅԱՆ

Միշտ մտածեցեք այդ մասին, բայց երբեք մի խոսեք

Չրույց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Լորին Սբ. Օծույթուն, Տ. Տ. Վազգեն Առաջին կաթողիկոսի հետ: Նոյեմբեր 23, 1990 թ.

(Թերթի փրկված միակ օրինակը պահպանվում է հեղինակի անձնական արխիվում)

Շուշան ՂԱՉՐՅԱՆ. – Հոկտեմբերին Մոսկվայում, Ղարաբաղի հարցով հայ պատգամավորների հացադուլը դադարեցնելիս, դուք ասացիք՝ Ղարաբաղյան շարժման հենց սկզբից ես լավատես չեի, դրա համար ես հիմա հուսահատ չեմ: Ինչպե՞ս է, որ չեք հուսահատվում Ղարաբաղի ու Շահումյանի համար այս ծանր օրերին:

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Ես այդ շարժման սկզբնավորությանն ավելի վերապահ էի՝ հաշվի առնելով մեր սեփական ուժերի տարողությունը: Սակայն Ղարաբաղյան շարժումն սկսողները շատ մեծ լավատեսությամբ սկսեցին, առանց հրսուտակ ծրագրի, կարծելով, որ եթե մեր պահանջն արդար է, և, անշուշտ, որ արդար է, անպայման այդ արդար դատը պիտի հաջողվի: Նույնիսկ խորհուրդ տվեցի շարժման առաջին օրերին լավ մտածել, հեռատես լինել, հաշվի առնել, թե արդյո՞ք երաշխիքներ կան գործը հաջողացնելու իմաստով՝ չմոռանալով մեր աշխարհագրական դիրքը, և մեր սեփական ուժերի տարողությունը:

Ես այն ժամանակ մտածում էի, որ Հայաստանը պետք է նեցուն կանգնի Ղարաբաղին, բայց ոչ ուղղակի, ոչ հրապարակավ, այլ տարբեր միջոցառումներով: Օրինակ ունեի Հյուսիսային Իռլանդիայի վիճակը: Զսան տարի արյունալի պայքար է գնում միավորման համար, բայց մայր երկիրն ուղղակիորեն չի միջամտում և արտաքինապես նորմալ հարաբերությունների մեջ է մտնում: Այնուամենայնիվ, մեր շարժումն սկսվեց, և ես էլ ոգևորվեցի, որովհետև այդպիսի հարցերի մեջ մարդ կարող է կարծիք ունենալ, բայց վստահ լինել չի կարող: Ես հիմա էլ վստահ չեմ՝ ճիշտ էր դա, թե չէ, բայց այն ստեղծվեց արդար պահանջի հիման վրա, և հայ ժողովրդի ազգային զգացումները սքանչելի կերպով դրսևորվեցին: Հիմա, եթե սկսել ենք, պիտի հաջողությամբ շարունակենք: Եվ պետք չէ հուսահատվել այն դժվարություններից, որոնք մեր առջև կան ու պիտի լինեն:

Շատ էլ պետք չէ աճապարել: Մենք երբեք հազար տարվա ժողովուրդ ենք, հետևաբար, կարող ենք պայքարը շարունակել, ասենք ևս տաս տարի: Լուծումը մեր արդար դատը հետապնդելու ձևերի մեջ պետք է որոնել՝ նայած ստեղծվող կացությունների: Ես ուզում եմ շեշտել՝ ըստ կացությունների, հեռատեսությամբ, զգուշավորությամբ, երբեմն համարձակությամբ, համբերությամբ, միշտ շարունակելով նույն պայքարը: Անցյալ դարում ուժեղ պայքար էր գնում ֆրանսիացիների և գերմանացիների միջև՝ Ալզաս Լոթինի (Էլզաս Լոթարինգյանի) հարցով: Գերմանացիները գրավել էին այդ շրջանը, և ֆրանսիացի ժողովուրդը մեզ նման զայրույթի, հուսահատության մեջ էր, երբ հայտնի մի ֆրանսիացի գործիչ հետևյալ պատգամը տվեց՝ միշտ մտածեցեք



այդ մասին, բայց երբեք մի խոսեք: Եվ ֆրանսիացի ժողովուրդը իրապես լռեց: Լռեց հիսուն տարի ու ապա 1918-ին նորից ետ վերցրեց իր հողերը: Պատմությունը երբեմն ճշմարիտ դասեր է տալիս:

Շ. Ղ. – Ինչ եք կարծում, ինչ դեր է կատարել քրիստոնեությունը մեր հոգևոր կերտվածքի ձևավորման մեջ, արդյո՞ք պատմության դասերը մեզ մի բան սովորեցրել են: Եվ իսկապե՞ս մենք քրիստոնեության արժեքներով ապրող ժողովուրդ ենք:

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Ես ոչ թե կարծիք եմ հայտնում որպես կաթողիկոս, այլ ուզում եմ պատմության հիմքի վրա մի հաստատում կատարել: Հայ ժողովուրդը քրիստոնեությունը պաշտոնապես ընդունեց 4-րդ դարի սկզբին, և այն այնքան նույնացավ մեր ազգի հետ, որ անհա 1700 տարի է, նրանք չեն բաժանվում մեկը մյուսից: Մեր պատմության ոսկեդարը քրիստոնեության անմիջական արդյունքն է: Ինձ թվում է, թե հայ ժողովուրդը ազգային և ոգեկան իմաստով իր վերջնական ձևերը չէր գտել առաջին դարերին, և որոնումի մեջ էր, թեև իբրև ժողովուրդ, կար:

Նա կարող էր դեպի պարսկական հեթանոսություն գնալ, այդ ճնշումները կային պարսիկների կողմից: Ծիշտ այդ պահին եկավ քրիստոնեությունը, և, մի տեսակ դարձավ այն շաղախը, որով վերջնականապես կաղապարվեց մեր ժողովրդի ոգեկանությունը: Այսպես չեղավ մյուս ազգերի հետ: Հելլեններն, օրինակ, իրենց ոսկեդարը ստեղծեցին քրիստոնեությունից 500 տարի առաջ: Մշակույթի առումով նրանց փառքը հին հեթանոսական շրջանն է, Պերսիկեսի ոսկեդարը: Ֆրանսիացիները քրիստոնեությունն ընդունել էին վաղուց, թեև ազգային տեսակետով արդեն կազմավորված էին, բայց մշակութային իրենց ոսկեդարը կերտեցին Լյուդովիկոս ԺԴ-ի շրջանում:

Մեր ժողովրդի ազգային ոգեկանությունը կազմավորվեց և ճառագայթեց քրիստոնեությունն ընդունելուց մոտ 100 տարի հետո միայն, երբ փայլատակեց Մեսրոպ Մաշտոցը, թարգմանվեց Սուրբ գիրքը, և սկիզբ առավ հայ գրականությունը: Նաև Վարդանանց պատերազմը հայրենական հերոսամարտ էր՝ քրիստոնեական հավատքի հիման վրա: Բավական է կարդալ Եղիշե պատմիչի գործը՝ հասկանալու համար այդ ճշմարտությունը: Դա համաշխարհային մակարդակով խղճի, կրոնի ազատության առաջին պատերազմն էր: Կրկնում եմ, մեր ազգային ոգեկանության հիմունքները քրիստոնեությամբ շաղախվեցին, կազմավորվեցին, ծաղկում ապրեցին և հասան մեր օրերը:

Շ. Ղ. – «Էջմիածին» հանդեսը տարիներ շարունակ լույս է տեսնում որպես Մայր աթոռի պաշտոնաթերթ: Կարելի չէ՞ր, որ հնարավորինս անդրադառնար մեր հայ քրիստոնեական վիթխարի մշակույթին, որը զանազան պատճառներով փակ է մեր առաջ: Օրինակ՝ ասելը, երուսաղեմի պարականոն Ավետարանները, որ իսպառ անմատչելի են: Կամ՝ օրինակ, Մաշտոց, Օրմանյան, Մագիստրոս, Շնորհալի, Տաթևացի, և այլն: Մեզ այս հեղինակների ժառանգության չնչին մասն է միայն հայտնի:

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Իր գոյության քառասուն տարիների ընթացքին այդ կարգի հողվածներ, գրություններ բազմաթիվ անգամ լույս են տեսած, բայց ոչ բավարար չափով, և ես Ձեզ հետ համաձայն եմ:

Շ. Ղ. – Ու նաև մի կարևոր խնդիր: Այսօրվա հայ մարդը որոշակիորեն չգիտե, թե ինչով է առաքելական եկեղեցին տարբերվում քրիստոնյա մյուս եկեղեցիներից՝ ուղղափառից, բողոքականից կամ կաթոլիկից: Զգիտե՞՞ ծիսական ու դավանաբանական ինչ տարբերություններ կան այս եկեղեցիների միջև: Չհարավոր չէ՞ Մայր աթոռի միջոցով այս տարրական գիտելիքները հաղորդել մեր հավատացյալներին, ձեռնարկներ, գրքեր տպագրել, մանավանդ, Էջմիածնի հրաշալի տպարանի պարագայում:

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Ես համաձայն եմ Ձեզ հետ: Մեր ժողովուրդը տասնյակ տարիներ կտրված լինելով հոգևոր կյանքից, եկեղեցուց, իրապես ի վիճակի չէ զանազանելու իր առաքելական եկեղեցին այնպիսի կրոններից: Դա մեզ մտահոգում է, անշուշտ, և աշխատում ենք այդ ուղղությամբ ևս, ինչքան որոշ ուժերը ներեն: Եվ ծրագրեր կան մեր հրատարակություններ կատարելու, ծանոթացնելու համար՝ մեր եկեղեցին իր յուրահատուկ աստվածաբանական մտածելակերպով, իր ազգային հոգևոր ավանդույթներով, այսօրվա կառույցով ու առաքելությամբ: Բայց գիտե՞ք, դա երկարատև աշխատանքի արդյունք կարող է լինել: Զայլ առ քայլ, ծրագրված գործ պիտի տարվի, որպեսզի հասնենք այդ նպատակի իրականացմանը:

Շ. Ղ. – Անցյալ դարի Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանությունը լեզվական տեսակետից եղել է սահմանափակ և ոչ գոհացուցիչ: Տեղյակ եմ, որ Սբ. Էջմիածինը պատրաստում է արևելահայ ամբողջական նոր թարգմանություն: Եվրոպայում տպագրվել են նաև Աստվածաշնչի տարբեր մեկնություններ բնագրից, որոնք ժամանակին արտացոլվել են տարբեր թարգմանություններում: Սբ. Էջմիածնի նոր թարգմանության մեջ, արդյո՞ք տեղ են գտել նորոյա տարբեր թարգմանությունների նոր մեկնությունները, նոր հայացքով, նոր մեկնաբանությամբ:

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Անցյալ դարում թարգմանել են բողոքականները՝ Պոլսում, որը լեզվական և այլ տեսակետներով գոհացուցիչ չէ: Հիմա այդ պակասը դարմանելու համար արդեն յոթ տարի է կատարում ենք նոր թարգմանություն այսօրվա գրական հայերենով՝ Սատենա-դարանի գիտնականների և մեր մի քանի հոգևորականների ջանքերով: Արդեն

130

պատրաստ է, արվում են խմբագրական ճշտումներ, կարծում են լավ թարգմանություն է, և առաջիկա տարում պատրաստ կլինի տպագրության համար: Տպագրությունն իրականացվելու է արտասահմանում: Բարեբախտաբար մեզ կյոթապես օգնելու է Աստվածաշնչի միացյալ ընտրությունը: Սա միջազգային կրոնական կազմակերպություն է, որը համաշխարհային մակարդակի վրա օժանդակում է սուրբ գրքի տարբեր լեզուների թարգմանությունը:

Շ. 2. – Իսկ նոր թարգմանությունն ինչպիսի գիտական մշակում է անցել:

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Հենց սկզբից ասեմ, որ մեկնություններ չեն լինելու, տեքստն է միայն թարգմանվելու: Ինչ վերաբերում է Եվրոպայում կատարվող թարգմանություններին, դրանք բավականին տարբերվում են մեկը մյուսից: Կան թարգմանություններ, որոնք կատարվում են արդիական մոտեցումներով, նույնիսկ հեռանում են բնագրից՝ ավելի հասկանալի, տվյալ ժողովուրդներին ավելի մատչելի լինելու համար: Մեր թարգմանիչների խնդիրն է եղել հավատարիմ մնալ գրաբար, ոսկեդարյան հայոց թարգմանությանը, նկատի առնելով նաև հունական, եբրայական բնագրերը: Այս առթիվ աներևակայելի հարցեր առաջացան և հնարավոր չափով այդ բոլորը հաշվի առնվեցին:

Շ. 2. – Հոգևոր ճեմարանը պատրաստում է աստվածաբաններ: Ինչպիսին է ակադեմիայի ու եկեղեցու կապը

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Մերոս համագործակցություն կա Մատենադարանի հետ, որովհետև հին գրականության կյոթերն այնտեղ են, և ուսանողներն իրենց ավարտաճառերը կամ ուսումնասիրությունները պատրաստելու համար անպայման Մատենադարանից են օգտվում:

Շ. 2. – Էքմիածինը որպես գիտական աստվածաբանական կենտրոն ինչ նոր հրատարակություններ է պատրաստում՝ մարդկանց վերադարձնելու հայ առաքելական եկեղեցուն: Երկրի այս ծանր իրավիճակում, բազմաթիվ աղանդավորական խմբեր են հայտնվել Երևանում: Չե՞ք կարծում, որ այդ ակտիվացումը կապված է ժողովրդի հոգևոր դաստիարակության պակասի հետ:

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Անշուշտ, մենք ոչ միայն մտահոգված ենք, այլ ցավում ենք այդ բանի համար, և ինչպես Դուք ասացիք, դրանց առաջն առնելու համար, նախ մեր քարոզչությունը պետք է մակարդակով հնչի մեր եկեղեցու բեմից, հեռատեսիլով: Իսկ գրականության հարցում ուղղակի չենք կարողանում հասցնել: Տպագրական դժվարություններ ունենք, բայց պիտի աշխատենք առաջն առնել կրոնական բաժանումների և ցրվածությունների, որոնք վատառողջ երևույթներ են: Ողջամտությունը պետք է հուշի մեր ժողովրդին, որ ճիշտ ճանապարհի վրա մնա, հավատարիմ մեր բազմադարյա առաքելական եկեղեցուն, որը մեր ազգային հարազատ եկեղեցին է՝ մոտ երկու հազար տարիներ ի վեր: Հավատարիմ մնալը մեր առաքելական եկեղեցուն ոչ միայն կրոնական, այլ նաև ազգային քաղաքական կարևորություն ունեցող հարց է: Աղանդավորական շարժումները անհարազատ են մեր ազգին, արտասահմանից են ներմուծված և ֆինանսավորված: Կրոնական մակարդակի վրա, իմ կարծիքով, մեր ժողովուրդը պետք է պահպանի իր միասնությունը հոգևոր և ազգային իմաստով: Մեկ ազգ, մեկ եկեղեցի, մեկ Մայր Հայաստան նշանաբանով:

Շ. 2. – Հայաստանում կան տարբեր քաղաքական կուսակցություններ, որոնք տարբեր կերպ են տեսնում Հայաստանի անկախության պարագան: Կրոնը, սակայն, այն միավորող ուժն է, որն իր շուրջ պետք է համախմբի հայ ժողովրդին՝ անկախ կուսակցական պատկանելություն:

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Կուսակցությունների գոյությունը ժողովրդավարության հիմն է, և ես դրա մեջ անպատեհություններ չեմ տեսնում: Պայմանով, որ ծայրահեղությունների չհասնի և թշնամանքներ չդրսևորվեն: Անշուշտ, եկեղեցին չպետք է որևէ կուսակցության կողմ լինի, դեմ էլ չպիտի լինի: Եկեղեցին բոլորի հետ պիտի լինի: Այն գիտակցությամբ, որ գոնե հոգևոր մակարդակի վրա կարողանա իրագործել ազգային միասնությունը, հարգելով բազմակուսակցության սկզբունքը:

Շ. 2. – Հայ առաքելական եկեղեցին պատմական փորձ ունի այս առումով՝ պետականության բացակայության պարագայում, պահպանել է ազգային միասնությունը:

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Այդ իմաստով մեր եկեղեցին կատարել է իր պատմական առաքելությունը, մանավանդ պետականությունը կորցնելուց հետո, երբ եղել են բաժան բաժան, տարբեր տիրապետությունների տակ: Բայց եկեղեցին կարողացել է մեր ազգի ոգեկան միասնությունը և անկախությունը պահել, հասցնել մինչև մեր օրերը:

Շ. 2. – Եվ չեմ կարող այս պահին հորհրդային միության գոյության այս դրամատիկ ու մեզ անձանոթ իրավիճակում, այս հարցը չտալ: Ինչպե՞ս եք պատկերացնում Հայաստանի և հորհրդային Ֆեդերացիայի հետագա հարաբերությունը կամ համագործակցությունը:

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Իմ հաստատ համոզմունքն է, որ Հայաստանի ազատ և ինքնիշխան հռչակումը արդար է և ճիշտ: Բայց միաժամանակ համոզված եմ, որ մեր ազգի շահերը պահանջում են, որ պահպանվի Միությունը ինքնավար և ինքնիշխան հարաբերությունների հիման վրա՝ սուվերեն անկախությունների կոնֆեդերացիայում:

Շ. 2. – Վեհափառ Հայրապետ, «Միտք» շաբաթաթերթը Ակադեմիայի նոր պարբերականն է: Հուսով եմ օգտակար կնկատվի մամուլի այսօրվա խայտաբղետ ներկայանալի մեջ:

Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏ. – Մեր օրինությունը «Միտք» շաբաթաթերթին: Անունն իմ սրտին խոսում է, քանզի ծանոթ եմ «Միտք» ամսագրին, որ ժամանակին լույս է տեսել Թիֆլիսում: Շատ բարձր մակարդակի հանդես էր: Իմ օրինությունը ձեր թերթին, ձեր խմբագրական կազմին, աշխատակիցներին և բոլոր ընթերցողներին: Տարածեք և լուսավորեք մեր ժողովրդի կյանքի ճանապարհը՝ արդար ու ազատ մտքի ճառագայթումներով:

«Միտք», 23 նոյեմբերի, 1990 թ. Երևան

3. 4. Հայաստանի ԳԱ «Միտք» շաբաթաթերթը կարճ կյանք ունեցավ: ՀՀԾ-ի իշխանության օրոք կրճատվեցին Ակադեմիայի ծախսերը և թերթը փակվեց: Ծնեքի պահպանման անբարենպաստ պայմաններում անձրևից ու կաթիլից բայթայված պահոցում, թերթի արխիվը ոչնչացավ: Հեղինակային մի քանի համարներ պահպանվել են իմ անձնական արխիվում:

Հեղինակ, 2023 թ. Երևան

Հեղ ղուք, Մովսեսներ՝ նորաթուխ ու խակ, Անառակ որդիք Հայոց աշխարհի, Այդ ում կառքին եք դուք այդպես լծված՝ Այդ ու՝ մ կամքին եք դուք դարձել գերի: Ում կամքով եք դուք թշնամու նման Մեր հողում վախ ու կասկած սերմանում Ի՞նչ եք անճանաչ տան գողի նման Երդիկից վերջին եզը դուրս հանում: Թառել եք ինչպես հարբած կառապան Անորոշության խելագար կառքին Ուր եք սլանում ինչպես դիվահար Ի՞նչ եք պատրաստել դուք Հայոց ազգին: Բայց լավ իմացե՞ք՝ երկար ականջով Ձեր տուռը առողջ գավալս բի ծիխ Ձեր մոլեռանդի անկապ բարբաջով Պոռնիկին երբեք կույս չեք դարձնի...

Սամվել ԱՎԴԱԼՅԱՆ

- Մեր դժբախտությունն այն չէ, որ աշխարհում կան թուրքեր, այլ այն, որ կան թուրքաման հայեր:
- Եվ ամեն մեկը, որ տգիտություն և վատություն ունեցավ իրենից դուրս փնտրելու աղետի պատճառները, կրկնեց հիմարություններ միայն:
- Հայրականը կուսումնասիրի իր հաղթանակի պատճառները՝ վաղը ևս հաղթանակելու համար, պարտվածը կանդառառա իր պարտության պատճառներին՝ վաղը նրանցից խուսափելու նպատակով:
- Այլ կերպ հայությունը կմնա մեկն այն դժբախտ ժողովուրդներից, որոնք գոյություն ունեն, բայց չեն ապրում, որոնք, աշխարհում են, բայց աշխարհից չեն:
- Դժբախտություն է, սակայն, երբ դաստիարակիչն ինքը ևս կարիք ունի դաստիարակության:

- Կյանք վատնեցին առանց հոգեպես վառվելու և մի հատիկ կայծ վառելու իրենց շրջապատի մեջ:
- Գիտակից ստրուկի և հանցագործի մեջ չկա տարբերություն:
- Թուրքն ավելի դրական կարծիք ուներ և ունի հայ ցեղի մասին, քան մեր հայնտան ստրկամիտները:

Քարեգին ՆՄԴԵՂ

«Ո՛վ նեմեսիսներ, պիտի շարունակենք ձեր կիսատ թողած գործը, բայց այս անգամ ոչ թե վրիժառու փամփուշտները պիտի սատակեն թուրք շարդարարները, այլ ազատագրութան զենքերն են, որ պիտի փշրեն թուրք ֆաշիզմն ու իմպերիալիզմը»:

(Լոզունգ «Հայաստան» պաշտոնաթերթի մեջ, թիվ 7, Ապրիլ 24, 1981թ, էջ 330)

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՒՆԵՐԸ

Ինչպես Հայաստանի պատմական մայրաքաղաքներն են եղել բազմաթիվ, այդպես էլ Հայոց Եկեղեցու կաթողիկոսական աթոռներն են եղել մեկ տասնյակ: Իսկ դրանց առաջացման ու փոփոխման պատճառը անշուշտ, կապված է մեր ազգի պատմական բուռն փոփոխությունների հետ:

Ըստ մեր ունեցած մատենագրական տվյալների, երբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով հաստատվեց սուրբ Էջմիածնի առաջին աթոռը, դա չորրորդ դարի սկզբներին էր:

Կաթողիկոսական աթոռն առաջին անգամ սուրբ Էջմիածնից տեղափոխվեց Դվին Յովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսի օրոք, 484-485 թթ.: Դրա դրոպապատճառն այն էր, որ Արշակունյաց թագավորության անկումից հետո հայոց մարզպան Վահան Մամիկոնյանը պետության քաղաքական կյանքի կենտրոն դարձրեց Դվին քաղաքը՝ այն հռչակելով հայոց նոր մայրաքաղաք:

Անցան դարեր, և Բագրատունյաց թագավորության գորացման տարիներին շենացավ ու ընդարձակվեց Անի, բայց կաթողիկոսական աթոռը մինչև 927 թ. դեռևս մնում էր Դվինում՝ այնտեղ հարատևելով չորս դարից ավելի: Բայց երբ արաբ Յուսուֆ ոստիկանն ավերեց Դվինը՝ հայրապետանոցի ու մայր տաճարի հետ, օրվա կաթողիկոս Յովհաննես Ե-ն ու իր հաջորդները միաժամանակ մնացին առանց կաթողիկոսանիստի և աստանդական շրջեցին, նախ նստելով Ձորավանքում, Աղթամարում և Արգիսանում, մինչև թագավորի հրամանով Անիում կառուցվեց նոր հայրապետանոցը: Եվ Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսի (992-1019) օրոք Հայոց հայրապետական աթոռը հաստատվեց Անիում:

Բայց դրանից շատ չանցած՝ 1045 թ. Անին հունական նենգամիտ քաղաքակառուցության ինտրոդուկցիայի և Բյուզանդիայի իշխանության տակ: Ու դարձյալ կաթողիկոսական աթոռը դարձավ աստանդական, մինչև որ Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը 1066 թ. աթոռանիստ ընտրեց Ծամնդավ ավանը՝ Ամասիայի մոտ:

Իսկ երբ կազմավորվեց Կիլիկիայի հայկական իշխանությունը, այնտեղի Շուրթ վանքը, որ գտնվում էր Ամանոսի (կամ Սև լեռան) բարձունքում, իր հոգևոր ծաղկունքին հասնելով դառնում է այդ նորելուկ պետության կաթողիկոսական առաջին աթոռանիստը: Իսկ դրան գուցա հետ հաստատվեց նաև Հայոց նոր կաթողիկոսությունը Աղթամարում, որը հարատևեց մինչև 1895 թ.:

Մինչ այդ Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսը կաթողիկոսական աթոռը փոխադրեց Կիլիկիայի Ծովքի Տիվլիք դոյակը, իսկ 1147 թ. այն տեղափոխվեց և հաստատվեց Զոմկլայում, որտեղ կաթողիկոս է եղել նաև Ներսես Շնորհալին: Այստեղ աթոռանիստում կաթողիկոսները նստեցին մինչև 13-րդ դար, իսկ երբ եգիպտացիները գրավեցին այն, 1293 թ. կաթողիկոսական աթոռը փոխադրվեց ու հաստատվեց Կիլիկիայի հայոց թագավորության մայրաքաղաք Սիսում:

Բայց Կիլիկիայի անկումից հետո 1441 թ.,



երբ հայոց կաթողիկոսն էր Գրիգոր Թ Մուսաբեկյանցը, Հայաստանի Սյունյաց թեմի վարդապետները կաթողիկոսական աթոռն Էջմիածին տեղափոխելու գործին լծվեցին: Անենք, որ այդ ժամանակ Հայաստանը պարսկական տիրապետության լծի տակ էր գտնվում:

Ահա Արևելյան թեմի այդ վարդապետները Թովմա Մեծփեցու զխավորությամբ Գրիգոր Բ Մուսաբեկյանց կաթողիկոսին հրավիրում են Էջմիածին, որպեսզի վերջինս իր Աթոռն առաջին նստավայր, այսինքն՝ Էջմիածին տեղափոխի: Բայց նա հարմար չնկատեց այդ առաջարկը, պատճառաբանելով, որ հայության մեծ մասը, գտնվելով Կիլիկիայի տարածքում, լատինացման վտանգի տակ է գտնվում:

Այդ ժամանակ Էջմիածնում ժողով գումարվեց, ու ընտրվեց բուն Հայաստանի համար նոր կաթողիկոս, որը և դարձավ Կիրակոս Վիրապեցին՝ 1441 թ.:

Այս թվականից էլ համարվում է Էջմիածնի կաթողիկոսական Աթոռի վերջին փոխադրությունը:

Այդ թվականը նաև համարվում է զույգ կաթողիկոսությունների սկիզբը՝ առաջինը Ամենայն Հայոց կաթողիկոսությունը՝ սուրբ Էջմիածին կենտրոնով, և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսությունը Անթիլիաս կենտրոնով, որ գտնվում է Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում:

Որպես անհրաժեշտ լրացում անենք Գրիգոր Լուսավորչի մատուցած և նրա աջի մասին նա, քանի որ Հայոց կաթողիկոսական աթոռն ամենասերտ առնչություն ունի Գրիգոր Լուսավորչի աջի հետ, որն աթոռի հետ մեկտեղ տեղափոխվում էր տեղից տեղ:

Եվ ըստ Գարեգին Յովսեփյանց կաթողիկոսի «Հիշատակարան»-ի՝ արդեն Ներսես Գ Իշխանցի Շինող կաթողիկոսը Չվարթոնց տաճարի շինության ժամանակ սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարներից տարել և գետեղել է չորս սյունների տակ:

Անցնում է ևս մի քանի դար: Եվ առաջին անգամ՝ իններորդ դարում, Գրիգոր Լուսավորչի աջի մասին հիշատակվում է Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում:

Իսկ երբ 923 թ. Դվինից հայրապետական աթոռը փոխադրվում է Աղթամար, դրա հետ մեկտեղ նաև բոլոր սրբությունները:

Այդ ժամանակներում արդեն Լուսավորչի աջը ծառայում էր որպես հայրապետական իրավասության նշան, որով եպիսկոպոսներ էին ձեռնադրում, մյուսն օրհնում և այլն:

Երբ Կիլիկյան պետության հաստատումից հետո Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսը (1105-1113 թթ.) այցելության է գնում Հայաստան՝ Անի, Աղթամար, Ախաթ, Արղընի, Աղթամարում չի համարձակվում պահանջել Լուսավորչի աջը, քողը, գավազանը, կաշվե գոտին այնտեղի կաթողիկոսությունից: Բայց Արղընի հասնելուց հետո մարդ է ուղարկում Աղթամար ու վերոհիշյալ սրբություններն ուզում այնտեղից, բայց մերժվում է աղթամարցիների կողմից:

Երբ 1114 թ. Սև լեռան վանքում հավաքվում է եկեղեցական մեծ ժողով, այնտեղ բանադրվում է Աղթամարի կաթողիկոսությունը և որոշվում Հայոց հայրապետի ընտրությունները կատարել Հայաստանի չորս զխավոր աթոռների (Բջնիի, Հաղպատի, Տաթևի և Արտազի) համաձայնությամբ:

Բայց Աղթամարի կաթողիկոսությունը հակառակվեց այդ ժողովի որոշմանը և մերժեց տալ Լուսավորչի աջը, և ավելին՝ իրենք իրենց համար կաթողիկոս ձեռնադրեցին:

Գրիգոր Պահլավունի կաթողիկոսը նախատեսելով դրա պատճառով սպասվելիք թյուրիմացությունները, Աղթամարի կաթողիկոսությունից զաղտնի կերպով հանում և տանում է Լուսավորչի աջն ու քողը:

Կիլիկիայում Ռուբինյանների իշխանության հաստատումից հետո Հայոց կաթողիկոսությունը տեղափոխվում է Զոմկլա ապահով բերդը: Այնուհետև Լուսավորչի աջի հիշատակության մասին կարողում ենք Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ում. «...ողջուն թող հասնի աստվածընկալ և փրկական սուրբ Նշանից, Հոգու հրեղեն լեզուները ընդունած առաքելական նշխարներից, մեր սուրբ Լուսավորչի Աջից և Աթոռից»:

Եվ այսպես՝ 172 տարի՝ 1120-ից մինչև 1292 թվականը, Լուսավորչի աջը մնում է Զոմկլայում: Այդ թվից հետո առաջին անգամ սուրբ Աջը գերեվարում է անօրեն մամլուքների Աշրավ սուլթանը, Ստեփանոս կաթողիկոսի և բազմաթիվ եկեղեցականների հետ մեկտեղ, ճիշտ այնպես, ինչպես 614 թ. պարսիկները Երուսաղեմից գերեցին Տիրոջ սուրբ Խաչափայտը՝ Չաքարիա պատրիարքի հետ մեկտեղ՝ մինչև 628 թ.:

Սուրբաջի գերությունը տևում է վեց տարի: Գերեվարումից վերադարձ կատարվում է Հայոց թագավոր Յեթումի օրոք, երբ Եգիպտոսի վրա Աստված սաստիկ սով է ուղարկում, ինչի պատճառով սուլթանը ստիպված վերադարձնում է սուրբ Աջը, փոխարենը պահանջելով Ծագ, Ալվճես, Պեհեստունի և Մարաշ քաղաքները:

Սիսի կաթողիկոսանիստում Լուսավորչի աջը մնում է մինչև 1440 թվականը:

1441 թվական: Պատմության մութ էջերով լի տարեթիվ է, քանի որ այդ թվից հետո դեռևս պատմաբաններին անհայտ ձևով Գրիգոր Լուսավորչի աջը անհայտանում է Սիսի կաթողիկոսարանից և հայտնվում Վաղարշապատում: Աջապահ-

В жизни дочери Чаренца Арпеник это стихотворение сыграло особую, очень значимую роль



Арпеник Егишевна Чаренц: «Не могу забыть школьную олимпиаду, посвященную годовщине установления Советской власти в Армении. Воспитанники нашего детдома выступали вместе с другими в зале Дома работников искусств. Вместо порученного мне стихотворения Наири Зарьяна «Сталин» я, опередив слова ведущего, начала декламировать «Ес им ануш Айастанի» Чаренца. Невозможно описать зрительскую реакцию: от аплодисментов у меня заложило уши. В тот день я праздновала в душе первое оправдание отца».

ԵՂԻՇԵՆ ԶԱՐԵՆՑ

Ես իմ անուշ Հայաստանի


Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բարև եմ սիրում, Մեր հին սագի ողբանվագ, լացակումամ լարև եմ սիրում, Արևանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման Ու նահիրյան աղջիկների հեզաճկուն պարև եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե, Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուրբ վսեմ, Մթում կորած խրչիթների անհյուրընկալ պատերը սև Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում:

Ուր էլ լինեմ – չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր, Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրերը մեր, Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր, Էլի ես որք ու արևավառ իմ Հայաստան յարև եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա, Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա, Աշխարհի անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա, Ինչպես անհաս փարքի չամվա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

Մարտիրոս Սարյանը «Ես իմ անուշ Հայաստանի»-ի մասին



Բացի Սուրբ Մեսրոպի ու Սահակի աղոթքներից, որ մանկության հեռավոր տարիներին ժառանգել եմ ծնողներիցս, դպրոցում չեմ սիրել բանաստեղծություն անգիր անել:

... Բայց ահա չեմ էլ հիշում, թե երբ եմ առաջին անգամ լսել կամ կարդացել «Ես իմ անուշ Հայաստանի»: Երբեք բերանացի չեմ սովորել, պարզապես գիտցել եմ: Ինձ թվում է, թե Սահակի ու Մեսրոպի աղոթքների հետ էլ բերել եմ:

Դա մեր այսօրվա աղոթքն է: Աղոթք, որ կարելի է թե՛ մտքում հյուսել, թե՛ մրմնջալ շշուկով, թե՛ արտասանել բարձրաձայն:

Իսկ ինչի՞ հետ համեմատես «Ես իմ անուշը»: Քիչ կլինի ասել, թե բանաստեղծություն է: Պոեմ էլ չէ, վեպ՝ նույնպես: «Ես իմ անուշ Հայաստանի» ավելի շուտ բոլոր մասշտաբներից դուրս պաննո է: Պաննո՝ հասցված ժողովրդական էպոսի աստիճանին: Սա անհիշելի ժամանակներից եկող Հայաստան-Ուրարտու-Արմենիա երկրի համապարփակ պաննո-դիմանկարն է: Դա մեր ազգի կենսագրության ու վարքի կենդանի արտացոլյուն է, մեր կրած տառապանքների ու փայփայած իդեալների, մեր անկումների ու վերելքների, արհավիրքների ենթակա մեր ճակատագրի ու ամենու մալու մեր ձգտման գեղարվեստական սինթեզն ու բյուրեղացումն է:

Այսպիսի մի երկ աշխարհի բերելու համար պետք է ամենաքիչը կիսաստված լինել:

163

և աջը բաց արեց: Այս լուրի վրա բոլոր ջուղայեցիները հավաքվեցին, ուխտ արեցին և տակավին ընդդիմանում էին և չէին թողնում աջը տանել: Այս պատճառով այնտեղից աջը գաղտնի հանեցին, բերեցին Ջուղայի վանքը, որտեղից էլ երևանցիների մոտ, այստեղից էլ թաքուն հանեցին, տարան Բրինջուկի իջևանատուն և դրին մի քրիստոնյա հայ վաճառականի բեռների մեջ: Նա աջը բեռան հետ միասին,

վաճառականի կարգով նախապես գնում է Թավրիզ, որից ջուղայեցիք ոչ մի տեղեկություն չունեին: Ապա Փիլիպոս կաթողիկոսը Սպահանից ելավ, գնաց Թավրիզ, աջը վաճառականից վերցրեց, բերեց Էջմիածին՝ Նույնի (աջի) սեփական աթոռը»:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջի այս վերադարձը տեղի ունեցավ 1638 թ. սեպտեմբերի 20-ին:

Որպես տեղեկություն փաստենք, որ Գրիգոր Լուսավորչի մասունքներից կա

նաև Երուսաղեմի սուրբ Հակոբյանց միաբանության գանձարանում:

Իսկ Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցու մուտքի դիմաց գտնվող սպիտակ, մարմարակերտ խորանի տակ է տեղակայված Գրիգոր Լուսավորչի մասունքը, որը 2001 թվականին Հայոց քրիստոնեության ընդունման 1700-ամյակի առթիվ իր հետ Հայաստան բերեց Հռոմի պապ Հովհաննես Պողոս 2-րդը:

РАСУЛ ГАМЗАТОВ

В истории нашей литературной жизни бывают маленькие, но значимые стихи, авторы которых, написав лишь эти немногие строки, могли больше ничего не писать, но прочно войти в нашу историю. Фёдор Иванович Тютчев создает метафизический портрет великой своей страны:

*Умом Россию не понять,
Аршином общим не измерить,
У ней особенная стать,
В Россию можно только верить.*

Игорь Северянин в 1923 году в четырех строках передавал весь драматизм эпохи вместе со своей личной драмой, тем самым обеспечив себе бессмертие!

*Но дни идут, уже стихают грозы,
Вернуться в дом Россия ищет троп,
Как хороши, как свежи будут розы,
Моей страной мне брошенные в гроб!*

Вернувшись к сегодняшнему нашему герою, Расулу Гамзатову, то квинтэссенцией, центральной точкой его творчества, по-моему, является стихотворение «Журавли». В аллегорической форме здесь представлен советский народ в виде журавлиной стаи. Промежуток малый в клине журавлином – это место павших наших граждан за свободу и независимость своей Родины. Стихотворение есть гимн нашему народу и его героическому поколению, победившему объединенную Европу в самой страшной войне.

Это гимн великим войнам и великим труженикам тыла, жизнь которых была последовательностью подвигов и преодолений!

Это гимн эпохе титанов!

Но началась новая русская смута, и враги смогли сеять смуту и раздор между народами великой страны. И безоговорочный авторитет этой страны, певец мира, добра и свободы Расул Гамзатов выступил примирителем, как нельзя, вовремя.

Мы, армяне, часто считаем, что у Расула Гамзатова была ПРОармянская позиция в этом противостоянии. Я под микроскопом прочитал его выступление в Президиуме Верховного Совета СССР 18 июля 1988 года (900 слов) и его письмо к своему другу – азербайджанскому поэту Наби Хазри (4500 слов), написанному 20 октября 1988 года. В этих посланиях, уверяю вас, ничего проармянского нет! Это скорее всего оценка ситуации и предложение многоопытного и бывалого человека, который пытается примирить двух своих близких людей. Ведь и в Армении, и в Азербайджане у него было много друзей, с которыми он хлеб и соль делил. Но мудрый человек не был услышан нашими соседями. Более того, он был объявлен врагом азербайджанского народа, и вчерашние друзья Расула Гамзатова в один миг стали его врагами. Посыпались письма с осуждениями, проклятиями и угрозами в адрес великого горца.



Начались сожжения его книг!!!

Словно из-под земли выросли новые наседники Адольфа Алоисовича!!! Впрочем, сожженные книги во все времена были не самыми худшими!

Уместно здесь вспомнить слова самого Расула Гамзатова:

*Чтоб стала человеком обезьяна,
Потребовалась вечность, а не век,
Зато в одно мгновенье, как ни странно,
Стать обезьяной может человек...*

И только потом Расул Гамзатов вчерашним друзьям дипломатично скажет о грандиозной разнице между историческими путями двух народов и еще более тонко намекнет, что у азербайджанцев $\frac{3}{4}$ всей их истории – это история семьи Алиевых!

Суть предложений Расула Гамзатова такова: Нагорный Карабах временно отдается под управление федерального центра. До тех пор, пока не спадет напряжение и состояние неустойчивого равновесия не заменит прочный мир. Этот рецепт не был услышан не только азербайджанским руководством, но и руководством Советского Союза во главе с Михаилом Горбачевым, известным своей бесхребетностью и политической слепотой. Это были не наивные рассуждения академика Сахарова, строившего воздушные замки и ставшего одним из разрушителей СССР. Это было реальным планом, способным гасить межнациональные конфликты, которые возникали то тут, то там по всему Советскому Союзу, не без помощи иностранных спецслужб. В результате этой глухоты и слепоты мы сегодня имеем то, что имеем. А имеем мы гражданскую войну, братоубийственную и беспощадную в России. И я хочу слово свое завершить стихотворением другого великого классика современности, Евгения Евтушенко, как нельзя лучше передающего трагедию и драматизм сегодняшнего дня.

Самвел АВДАЛЯН.

Дай бог!

Дай бог слепцам глаза вернуть
и спины выпрямить горбатым.
Дай бог быть богом хоть чуть-чуть,
но быть нельзя чуть-чуть распятым.

Дай бог не вляпаться во власть
и не геройствовать подложно,
и быть богатым — но не красть,
конечно, если так возможно.

Дай бог быть третьим калачом,
не сожженным ничьею шайкой,
ни жертвой быть, ни палачом,
ни барином, ни попрошайкой.

Дай бог поменьше рваных ран,
когда идет большая драка.
Дай бог побольше разных стран,
не потеряв своей, однако.

Дай бог, чтобы твоя страна
тебя не пнула сапожищем.
Дай бог, чтобы твоя жена
тебя любила даже нищим.

Дай бог лжецам замкнуть уста,
глас божий слыша в детском крике.
Дай бог живым узреть Христа,
пусть не в мужском, так в женском лике.

Не крест – бескрестье мы несем,
а как сгибаемся убого.
Чтоб не извериться во всем,
Дай бог ну хоть немного Бога!

Дай бог всего, всего, всего
и сразу всем – чтоб не обидно...
Дай бог всего, но лишь того,
за что потом не станет стыдно.

Евгений Евтушенко, 1990 г.

Ты не достоин Родины, если ее не рассматриваешь как высочайшую цель, а свою личность – как орудие ее освобождения.

Гарегин НЖДЕ.

МЕЖДУНАРОДНЫЙ ПОЭТИЧЕСКИЙ ФЕСТИВАЛЬ «ШЁЛКОВЫЙ ПУТЬ»

Российский поэт, член Правления Союза писателей России Вадим Терёхин стал обладателем высшей награды «За выдающийся вклад в мировую поэзию» IV Международного поэтического фестиваля «Шелковый путь» в Китае. По его положению такая премия присуждается только двум поэтам – китайскому и иностранному. Со стороны хозяев фестиваля высокой чести удостоен известный китайский поэт Вей Та. Заявки были направлены из 137 стран мира. Торжественное мероприятие состоялось в Сиане, на вилле Лунцюань, уезд Цзиньнань.

В конце золотой осени под горой Сага в расположении дворца Чиян династии Хань (провинция Шэньси – родина Великого Шелкового пути), где небо становится белым, родниковая вода голубой, а хризантемы золотыми, прошло замечательное литературное событие – IV Международный поэтический фестиваль «Шелковый путь» и I Международный фестиваль поэти-



Вадим Фёдорович Терёхин

– Я хотела бы узнать о вашем детстве. Какое значение имеет детство в жизни поэта и писателя? Как вы думаете, когда поэт и писатель вырастает, где остается его детство? Что вы могли бы рассказать о своей матери, своей семье?

– Небеса ко мне благоволили. Я родился в день рождения мамы, в воскресенье. То есть появился на свет как подарок. Всю жизнь мне необходимо этому факту соответствовать.

Детство прошло в Калуге. Все каникулы и свободное время я проводил у бабушки Антонины Яковлевны Поляковой (Беклемишевой) в поселке Песоченский Тульской области. Иначе его называли Митин Завод, в котором в 1742 году купец Петр Боташов построил чугунолитейный завод, а чуть позже полотняную фабрику. По семейной легенде, бабушкин дед князь Владимир Беклемишев был сослан сюда по политическим мотивам. Следы его, к сожалению, теряются в истории.

Лес, пруд, чтение и общение со сверстниками! Так кратко можно охарактеризовать то время. Там я обретал полную свободу. Живописная русская природа вполне этому способствовала. Поход за ягодами и грибами или просто гулянье в лесу – ежедневный и обыденный атрибут. До пяти лет я жил там под двойным присмотром – бабушки Тони и прабабушки Ольги Беклемишевой. Так что для меня деревенская жизнь естественна и органична.

Половина поселка числилась нашими родственниками. Всех жителей я воспринимал как одну большую общую семью. Помню, что на любой праздник у нас собиралось огромное количество людей, обя-

зательно пели русские народные песни и танцевали. Я застал еще традицию, когда отношения между людьми выяснялись с помощью частушек.

Возвращаясь в город, я не понимал, почему люди не здороваются друг с другом на улице.

Очень любил выезды моей огромной семьи в лес. У нас это называлось «таборить», когда на природе пекли картошку в костре, играли в разные ныне позабытые игры – лапту, казаки-разбойники, прятки, салочки, садовника.

Такого единения, общности, взаимопонимания и любви между людьми я уже больше никогда не встречал. Память о детстве всегда со мной. Оно никуда не ушло, а просто превратилось во взрослого мужчину, у которого остались все те же детские мечты и иллюзии, правда, подавленные суровой реальностью и бытом. Но все вот так кажется, что ляжешь навзничь на зеленой летней траве, закинешь голову, посмотришь в бесконечное синие небо – и радость жизни наполнит тебя до краев, и ты готов своей любовью обнять весь мир! И все у тебя впереди!

– Каково место творчества в вашей жизни?

– Творчество – возможность быть самим собой!

Моя мама знала много стихов наизусть. Хорошо помню, когда, укладывая меня спать, она читала пушкинское «Три девицы под окном/пряли поздно вечерком...», «Мороз и солнце день чудесный...» или русские народные сказки и былины. Почему я говорю об этом? Потому что литературное творчество начинается с чтения.

ческих фильмов «Шелковый путь». В этом году фестиваль получился «двойной», а его организаторами выступили Международный поэтический комитет Всемирного форума Шелкового пути Организации Объединенных Наций, Международная федерация поэтов Шелкового пути, Организационный комитет Международного фестиваля поэзии «Шелковый путь», Писательский еженедельник. Соорганизаторами стали филиал Шелкового пути Ассоциации культурных исследований Саньцин, Shaanxi Travel World Silk Road Happy City, журнал «Поэты мира», Большой поэтический журнал, горная вилла Лунцюань.

Фестиваль проходил в двух форматах – очном и заочном. Вадим Терёхин обратился с благодарственной речью ко всем почитателям поэзии с большого экрана. Награду за него получил известный поэт, переводчик, исполнительный директор фестиваля Cao Shui.

Творчество дает шанс человеку стать независимым и суверенным государством!

Любой человек, какой бы высокий пост он ни занимал, может его потерять. Любой бизнесмен может разориться. И тогда возникает вопрос: а кто ты вот такой голый и беззащитный? У многих на это нет ответа. И только творчество сохраняет твою целостность. Здесь никто тебя не отменит, не выкинет на улицу, не запретит. Здесь твоя свобода, в которой ты сражаешься только с самим собой – своей гордыней, ленью, инертностью. Побеждая их, ты становишься по-настоящему самостоятельным. Ты работаешь на должности самого себя, своего имени и фамилии.

Творчество всегда обращено к небу! Оно дает догадку о Боге, о неизреченном и невидимом мире.

